## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով Ձեզ եմ ուղարկում նախորդ գումարման Ազգային ժողովում քննարկված առաջին և երկրորդ ընթերցմամբ ընդունված օրենքների նախագծերը:

Խնդրում եմ քննարկել և ներկայացնել եզրակացություններ՝ վերոհիշյալ օրենքների նախագծերը հերթական ընթերցմամբ քննարկելու նպատակահարմարության մասին:

Հ. Աբրահամյան

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2012 թ. հուլիսի 2

Ն - 103

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 01/2-17117
02.07 2012 թ.

| Ըստ բոլոր հանձնաժողովների | |
|---|---|
| Փաստաթղթի կոդ | Փաստաթղթի անվանում, հեղինակ, ներկայացման ամսաթիվ |
| Կ-530-09.02.2009-ԳԲ-010/0<br>Կ-530-09.02.2009-ԳԲ-010/1<br>Կ-530-09.02.2009-ԳԲ-010/2 | 1. «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>06.02.2009<br>Զեկուցող՝ ՀՀ բնապահպանության նախարար Ա.Հարությունյան |
| Կ-530$^{1}$-09.02.2009-ԳԲ-010/0<br>Կ-530$^{1}$-09.02.2009-ԳԲ-010/1<br>Կ-530$^{1}$-09.02.2009-ԳԲ-010/2 | 2. Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>06.02.2009<br>Զեկուցող՝ ՀՀ բնապահպանության նախարար Ա.Հարությունյան |
| Կ-530$^{2}$-09.02.2009-ԳԲ-010/0<br>Կ-530$^{2}$-09.02.2009-ԳԲ-010/1<br>Կ-530$^{2}$-09.02.2009-ԳԲ-010/2 | 3. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>06.02.2009<br>Զեկուցող՝ ՀՀ բնապահպանության նախարար Ա.Հարությունյան |
| Կ-079-15.08.2007,26.12.2007-ՏՀ-010/0<br>Կ-079-15.08.2007,26.12.2007-ՏՀ-010/1 | 4. «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>15.08.2007 |
| Կ-079$^{1}$-15.08.2007,26.12.2007-ՏՀ-010/0<br>Կ-079$^{1}$-15.08.2007,26.12.2007-ՏՀ-010/1 | 5. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>15.08.2007 |
| Պ-330-17.09.2008-ԳԿ-010/0<br>Պ-330-17.09.2008-ԳԿ-010/1 | 6. «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին<br>Հեղինակներ՝ Վահան Հովհաննեսյան, Լիլիթ Գալստյան, Արա Նռանյան, Արմեն Ռուստամյան, Արծվիկ Մինասյան, Արտյուշ Շահբազյան<br>17.09.2008 |
| Պ-380-21.11.2008,27.01.2009-ՄԻ-010/0<br>Պ-380-21.11.2008,27.01.2009-ՄԻ-010/1 | 7. «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակներ՝ Նաիրա Զոհրաբյան, Վիկտոր Դալլաքյան, Հեղինե Բիշարյան, Լիլիթ Գալստյան<br>20.11.2008 |
| Պ-380$^{1}$-21.11.2008,27.01.2009-ՄԻ-010/0<br>Պ-380$^{1}$-21.11.2008,27.01.2009-ՄԻ-010/1 | 8. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին<br>Հեղինակներ՝ Նաիրա Զոհրաբյան, Վիկտոր Դալլաքյան, Հեղինե Բիշարյան, Լիլիթ Գալստյան<br>20.11.2008 |
| Կ-237-18.03.2008-ԳԿ-010/0<br>Կ-237-18.03.2008-ԳԿ-010/1 | 9. «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>17.03.2008<br>Զեկուցող՝ ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Գագիկ Գյուրջյան |
| Կ-353$^{1}$-20.04.2009-ՏՏ-010/0<br>Կ-353$^{1}$-20.04.2009-ՏՏ-010/1 | 10. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>20.04.2009<br>Զեկուցող՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ.Տերտերյան |
| Կ-353-16.10.2008,20.04.2009-ՏՏ-010/0<br>Կ-353-16.10.2008,20.04.2009-ՏՏ-010/1 | 11. Ֆինանսական համահարթեցման մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>20.04.2009<br>Զեկուցող՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ.Տերտերյան |

| | |
|---|---|
| Պ-545-24.02.2009-ԳԿ-010/0<br>Պ-545-24.02.2009-ԳԿ-010/1 | 12. «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակներ՝ Լիլիթ Գալստյան, Վահան Հովհաննեսյան, Միքայել Մանուկյան, Արծվիկ Մինասյան, Անահիտ Բախշյան, Հեղինե Բիշարյան<br>24.02.2009 |
| Պ-418-26.12.2008-ՊԻ-010/0<br>Պ-418-26.12.2008-ՊԻ-010/1 | 13. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին<br>Հեղինակ՝ Լարիսա Ալավերդյան<br>25.12.2008 |
| Կ-866-02.04.2010-ԱՍ-010/0<br>Կ-866-02.04.2010-ԱՍ-010/1 | 14. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>02.04.2010<br>Զեկուցող՝ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Թ.Հակոբյան |
| Պ-1083-08.02.2011,18.03.2011-ՊԻ-010/0<br>Պ-1083-08.02.2011,18.03.2011-ՊԻ-010/1 | 15. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին<br>Հեղինակ՝ Վիկտոր Դալլաքյան<br>07.02.2011 |
| Պ-791-08.04.2009,20.05.2011-ՏՀ-010/0<br>Պ-791-08.04.2009,20.05.2011-ՏՀ-010/1 | 16. «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակներ՝ Խաչիկ Հարությունյան, Հեղինե Բիշարյան, Իշխան Խաչատրյան, Հովհաննես Մարգարյան<br>06.04.2011 |
| Պ-1175-20.05.2011-ՏՀ-010/0<br>Պ-1175-20.05.2011-ՏՀ-010/1 | 17. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին<br>Հեղինակներ՝ Գալուստ Սահակյան, Վարդան Այվազյան, Հեղինե Բիշարյան, Գոհար Ենոքյան<br>20.05.2011 |
| Կ-737-14.10.2009-ՏՀ-010/0<br>Կ-737-14.10.2009-ՏՀ-010/1 | 18. «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>13.10.2009<br>Զեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարար Տ.Դավթյան |
| Կ-1112-04.04.2011-ՏՀ-010/0<br>Կ-1112-04.04.2011-ՏՀ-010/1 | 19. «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>01.04.2011<br>Զեկուցող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյան |
| Կ-$1112^{1}$-04.04.2011-ՏՀ-010/0<br>Կ-$1112^{1}$-04.04.2011-ՏՀ-010/1 | 20. «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>01.04.2011<br>Զեկուցող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյան |
| Կ-$1112^{2}$-04.04.2011-ՏՀ-010/0<br>Կ-$1112^{2}$-04.04.2011-ՏՀ-010/1 | 21. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>01.04.2011<br>Զեկուցող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյան |
| Կ-$1112^{3}$-04.04.2011-ՏՀ-010/0<br>Կ-$1112^{3}$-04.04.2011-ՏՀ-010/1 | 22. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>01.04.2011<br>Զեկուցող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյան |
| Կ-1207-12.07.2011-ԱՍ-010/0<br>Կ-1207-12.07.2011-ԱՍ-010/1 | 23. «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>12.07.2011<br>Զեկուցող՝ ՀՀ առողջապահության նախարար Հ.Քուշկյան |

| | |
|---|---|
| Կ-956-28.07.2010-ԳԲ-010/0<br>Կ-956-28.07.2010-ԳԲ-010/1 | 24. «Սպառողական կոոպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>28.07.2010<br>Զեկուցող՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Գ.Ալավերդյան |
| Պ-1236-09.09.2011,21.10.2011-ՊԻ-010/0<br>Պ-1236-09.09.2011,21.10.2011-ՊԻ-010/1 | 25. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին<br>Հեղինակներ՝ Գալուստ Սահակյան, Ռաֆիկ Պետրոսյան, Վարդան Բոստանջյան, Հովհաննես Մարգարյան, Արամ Սաֆարյան<br>08.09.2011 |
| Կ-1259-13.10.2011-ՄԻ-010<br>Պ-422-09.01.2009-ՄԻ-010 /0<br>Կ-1259-13.10.2011-ՄԻ-010<br>Պ-422-09.01.2009-ՄԻ-010 /1 | 26. Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին<br>Հեղինակներ՝ ՀՀ կառավարություն, Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան<br>02.12.2011 |
| Կ-1225-02.09.2011-ՏՀ-010/0<br>Կ-1225-02.09.2011-ՏՀ-010/1 | 27. «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>01.09.2011<br>Զեկուցող՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյան |
| Կ-1225$^{1}$-02.09.2011-ՏՀ-010/0<br>Կ-1225$^{1}$-02.09.2011-ՏՀ-010/1 | 28. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>01.09.2011<br>Զեկուցող՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյան |
| Պ-873-15.04.2010-ԳԿ-010/0<br>Պ-873-15.04.2010-ԳԿ-010/1 | 29. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին<br>Հեղինակներ՝ Վահան Հովհաննեսյան, Կարեն Վարդանյան, Արա Նռանյան, Արտյուշ Շահբազյան, Արծվիկ Մինասյան, Արմեն Ռուստամյան<br>15.04.2010 |
| Կ-1017-11.11.2010-ՏՀ-010/0<br>Կ-1017-11.11.2010-ՏՀ-010/1 | 30. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>10.11.2010<br>Զեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ.Արամյան |
| Կ-1017$^{1}$-11.11.2010-ՏՀ-010/0<br>Կ-1017$^{1}$-11.11.2010-ՏՀ-010/1 | 31. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>10.11.2010<br>Զեկուցող՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ.Արամյան |
| Կ-1262-31.10.2011-ՏՀ-010/0<br>Կ-1262-31.10.2011-ՏՀ-010/1 | 32. «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաեւ երկակի նշանակության տեղեկատվության եւ մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին<br>Հեղինակ՝ ՀՀ կառավարություն<br>28.10.2011<br>Զեկուցող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ.Դավթյան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

## ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը երկրորդ ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

21 մարտի 2011 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 959 - Լ

Երկրորդ ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԼՈՒԽ I
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքով սահմանվում են իրավաբանական անձանց կողմից իրենց արտադրական պրոցեսի, դրա ընթացքում առաջացած շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող աղտոտող նյութերի (այսուհետ՝ վնասակար նյութեր կամ աղտոտող նյութեր) և օգտագործվող հումքի նկատմամբ ինքնահսկման (այսուհետ՝ ինքնահսկում) իրականացման իրավական հիմքերը:

### Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

Օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքի 12-16 հոդվածներով սահմանված իրավաբանական անձանց (այսուհետ՝ կազմակերպություն) և բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) վրա:

### Հոդված 3. Ինքնահսկման մասին օրենսդրությունը

1. Բնապահպանական օրենսդրության պահանջների նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության օրենքներից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

### Հոդված 4. Օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ինքնահսկում**՝ չափագրման և (կամ) հաշվարկային մեթոդների հիման վրա դիտարկումներով կազմակերպության կողմից իր արտադրական պրոցեսի վիճակի, այդ թվում՝ հումքի օգտագործման, դրա ընթացքում առաջացած վնասակար նյութերի որակի ու քանակի, օգտագործվող բնական ռեսուրսների որակի ու քանակի և բնապահպանական օրենսդրության պահանջներին շրջակա միջավայրի վիճակի համապատասխանության գնահատման գործընթաց.

2) **մշտական (անընդհատ) հսկողություն**՝ լիազոր մարմնի կողմից հաստատված կազմակերպության ինքնահսկման ծրագրով պարամետրերի չափումների ժամանակացույցով (սահմանված կարգով չափման մեթոդներին համապատասխան) սահմանվող չափումների պարբերականություն.

3) **հումք**՝ կազմակերպության արտադրական գործարկման և շահագործման ժամանակ օգտագործվող նյութեր, բնական ու էներգետիկ ռեսուրսներ.

4) **նյութ**՝ կազմակերպության արտադրական գործարկման և շահագործման ժամանակ օգտագործվող կամ առաջացող ցանկացած քիմիական տարր և դրա միացություններ՝ բացառությամբ գենետիկորեն վերափոխված օրգանիզմների.

5) **վնասակար նյութեր կամ աղտոտող նյութեր**՝ արտադրության պրոցեսում կայանքի առանձին կամ դիֆուզիոն (ախոված) աղբյուրներից մթնոլորտային օդ, ջրային ռեսուրսներ և հող կատարվող արտանետումներում, արտահոսքերում, ինչպես նաև արտադրության թափոններում պարունակվող վնասակար ազդեցություն ունեցող նյութեր.

6) **աղտոտում**՝ գործունեության արդյունքում առաջացող վնասակար նյութերի ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը մթնոլորտային օդի, հողի կամ ջրային ռեսուրսների վրա, որը կարող է վնասակար ազդեցություն ունենալ մարդու առողջության կամ շրջակա միջավայրի վրա, վատթարացնել կամ խաթարել շրջակա միջավայրի և դրա օգտակար հատկությունների ամբողջականությունը.

7) **թույլտվություն**՝ լիազոր մարմնի կողմից տրվող փաստաթուղթ, որը պարունակում է օրենսդրության պահանջների համապատասխանությունն ապահովող, որոշ պայմանների պահպանմամբ ամբողջ կազմակերպության կամ դրա մի մասի կամ առանձին տեղամասի շահագործումը թույլատրող գրավոր որոշման մաս կամ ամբողջական որոշում (կամ մի քանի այդպիսի որոշումներ): Թույլտվությունը կարող է վերաբերել նույն վայրում գտնվող և նույն կազմակերպության կողմից շահագործվող մեկ կամ մի քանի օբյեկտներին կամ օբյեկտների մասերին.

8) **շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ազդեցության գնահատում)**՝ կազմակերպության գործունեության հետևանքով շրջակա միջավայրի՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, լանդշաֆտի (աշխարհագրական քաղաքի համասեռ տեղամաս, բնապատկեր), կլիմայի, նյութական արժեքների և մշակութային ժառանգության, ինչպես նաև տվյալ գործոնների փոխկապակցվածության վրա ուղղակի կամ անուղղակի ներգործության գնահատում՝ պարբերական վերլուծության միջոցով.

9) **շահագործման պայմանների փոփոխություն**՝ կազմակերպության արտադրական գործընթացների այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են դրական կամ բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա.

10) **առաջնային հաշվառման գրանցամատյան**՝ լիազոր մարմնի կողմից սահմանված, ինքնահսկման արդյունքների գրանցման թղթային ձևաչափի փաստաթուղթ և դրան համապատասխան համակարգչային ծրագիր:

### Հոդված 5. Ինքնահսկման իրականացման նպատակն ու խնդիրները

1. Ինքնահսկման իրականացման նպատակը՝ միջոցների ու ընթացակարգերի կիրառմամբ շրջակա միջավայրի աղտոտման համալիր կանխարգելումն է և (կամ) շրջակա միջավայրի աղտոտվածության ծանրաբեռնվածության նվազեցումը:

2. Ինքնահսկման իրականացման հիմնական խնդիրներն են՝

1) բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նպատակով կազմակերպության կողմից իր գործունեության նկատմամբ անընդհատ հսկողության իրականացման ապահովումը.

2) շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների կանխարգելման և (կամ) նվազեցման ապահովումը.

3) բնական ռեսուրսների գերշահագործման կանխարգելման ապահովումը.

4) շրջակա միջավայրի վիճակի և շրջակա միջավայրի վրա կազմակերպության գործունեության ազդեցության գնահատման վերաբերյալ հավաստի տեղեկատվության ապահովումը:

### Հոդված 6. Ինքնահսկման սկզբունքները

Ինքնահսկման սկզբունքներն են՝

1) շրջակա միջավայրի վիճակի գնահատմամբ վտանգավոր փոփոխությունների հնարավոր կանխարգելման գերակայությունը.
2) շրջակա միջավայրի անվտանգության ապահովման առաջնայնությունը.
3) շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաստիությունը.
4) շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ լիազոր մարմնին հաշվետու լինելը.
5) տեղեկատվության մատչելիությունը հասարակայնության համար.
*6)* բնապահպանական օրենսդրության պահանջների չկատարման կամ խախտման համար պատասխանատու լինելը.
*7)* կազմակերպության կողմից իր միջոցներով ինքնահսկում իրականացնելը:

## ԳԼՈՒԽ 2
## ԻՆՔՆԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ *ԼԻԱԶՈՐ* ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Հոդված 7. Ինքնահսկման գործընթացում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

Ինքնահսկման գործընթացում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝
1) ինքնահսկման գործընթացի քաղաքականության և ռազմավարության իրականացման ապահովումը.
2) ինքնահսկման ենթակա կազմակերպությունների ցանկի հաստատումը.
3) իր իրավասության սահմաններում ինքնահսկման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի ընդունումը.
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

### Հոդված 8. Ինքնահսկման գործընթացում լիազոր մարմնի իրավասությունները

Ինքնահսկման գործընթացում լիազոր մարմնի իրավասություններն են՝
1) ինքնահսկման գործընթացի քաղաքականության և ռազմավարության մշակումը.
2) ինքնահսկման համակարգի զարգացման ծրագրերի մշակումը.
3) կազմակերպության կողմից կազմած ինքնահսկման ծրագրերի հաստատումը.
4) ինքնահսկման մեթոդների համաձայնեցումը.
5) ինքնահսկման տվյալների շտեմարանի ստեղծումն ու վարումը.
6) ինքնահսկման գործընթացը կանոնակարգող իրավական ակտերի մշակումը և իր իրավասության սահմաններում դրանց հաստատումը.
7) ինքնահսկման գործընթացի և դրա արդյունքում ստացված տեղեկատվության հավաստիության նկատմամբ վերահսկողության իրականացումը.
8) տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանն աջակցելը.
9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

## ԳԼՈՒԽ 3
## ԻՆՔՆԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ ԵՎ ԻՆՔՆԱՀՍԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### Հոդված 9. Ինքնահսկման համակարգը

1. Ինքնահսկման համակարգը ներառում է՝
1) կազմակերպության արտադրության գործարկման և շահագործման պարամետրերի, ներառյալ՝օգտագործվող հումքի որակական և քանակական պարամետրերի դիտարկումները.



2) վնասակար նյութերի և սույն օրենքի 13-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված բնական ռեսուրսների որակական ու քանակական պարամետրերի դիտարկումները.
3) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:

### Հոդված 10. Արտադրության շահագործման և գործարկման պարամետրերը և ինքնահսկման ձևերը

1. Կազմակերպության արտադրության գործարկման և շահագործման նկատմամբ ինքնահսկման ընթացքում դիտարկման ենթակա պարամետրերն են՝
1) արտադրության գործարկման և շահագործման տեխնոլոգիական կանոնակարգն ապահովող ֆիզիկական մեծությունները՝ ջերմաստիճանի և ճնշման չափումների ու ստացված տվյալների գրանցմամբ.
2) օգտագործվող հումքի տեսակը, դրա որակական ու քանակական մեծությունները՝ դրանց հաշվառման տվյալների գրանցմամբ.
3) տեխնոլոգիական կանոնակարգին համապատասխան օգտագործվող *կամ առաջացող* ցանկացած նյութին բնորոշ հոտի առկայությունը (ինչը չի նախատեսում տվյալ տեխնոլոգիական կանոնակարգը), դրա աղբյուրի, պատճառի, տևողության և հետևանքների վերացման համար կիրառված միջոցառումների բնութագրի ու ժամանակահատվածի գրանցմամբ.
4) գործարկման և շահագործման տեխնոլոգիական կանոնակարգի փոփոխությունները՝ դրանց բնութագրերի գրանցմամբ.
5) մաքրման համար տեղակայված սարքավորումների ու կառույցների աշխատանքի վիճակը՝ գազափոշեորսիչ սարքավորումների և արտահոսքերի մաքրման կայանքների առկայության և դրանց շահագործման անձնագրերին համապատասխանության տվյալների գրանցմամբ.
6) մաքրման համար տեղակայված սարքավորումների ու կառույցների աշխատանքի տեխնոլոգիական կանոնակարգերով սահմանված պարամետրերից շեղումները՝ դրանց պատճառի, տևողության և հետևանքների վերացման համար կիրառված միջոցառումների բնութագրի ու ժամանակահատվածի գրանցմամբ :
2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված չափումներն ու հաշվառման տվյալները գրանցվում են տվյալ տեխնոլոգիական կանոնակարգին համապատասխան՝ կազմակերպության կողմից սահմանված արտադրության գործարկման կամ շահագործման առաջնային հաշվառման գրանցամատյանում:
3. Սույն հոդվածով սահմանված արտադրության գործարկման և շահագործման պարամետրերը ու դիտարկման ձևերը, հումքի՝ բնական ռեսուրսների օգտագործման մասով, չեն տարածվում ջրառի և օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման պարամետրերի վրա: Դրանք կարգավորվում են սույն օրենքի 13-րդ և 16-րդ հոդվածներով:

### Հոդված 11. Վնասակար նյութերի և բնական ռեսուրսների նկատմամբ ինքնահսկումը

1. Վնասակար նյութերի և բնական ռեսուրսների որակական և քանակական պարամետրերի նկատմամբ ինքնահսկումն իրականացվում է դիտարկումների՝ չափումների և գրանցումների միջոցով:
2. Վնասակար նյութերի և բնական ռեսուրսների նկատմամբ որակական և քանակական պարամետրերի նկատմամբ դիտարկումներ իրականացվում են՝
1) կազմակերպության կողմից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների նկատմամբ.
2) կազմակերպության կողմից բաց ջրային ավազան և կոյուղու կոլեկտորներ կատարվող աղտոտող նյութերի արտահոսքերի և արտադրության պրոցեսում օգտագործվող ջրային ռեսուրսների նկատմամբ.
3) կազմակերպության արտադրական թափոնների նկատմամբ.
4) կազմակերպության տարածքի, ներառյալ՝ սանիտարապաշտպանական գոտու հողերի աղտոտման նկատմամբ.

4) արտակարգ, վթարային կամ միջադեպային իրավիճակների գնահատումը.

5) դրական ազդեցությունների առկայության դեպքում՝ դրանց պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների դեպքում՝ դրանց կանխարգելման, բացառման կամ նվազեցման և շրջակա միջավայրին հասցված վնասի դեպքում՝ նաև վնասի փոխհատուցման ուղղությամբ իրականացված միջոցառումները, դրանց արդյունավետությունն ու ծախսերը.

6) գնահատման մեթոդների, դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտների, դժվարությունների, ներառյալ՝ տվյալների բացակայության վերաբերյալ տեղեկությունները.

7) հաշվետվությունում ներառված տվյալների աղբյուրների վերաբերյալ տեղեկությունները:

4. Ազդեցության գնահատումն իրականացվում է սույն օրենքի, այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի և լիազոր մարմնի կողմից հաստատված ազդեցության գնահատման մեթոդական ուղեցույցին համապատասխան:

5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ենթակա սահմանները, պարբերականությունը և հաշվետվությունների ներկայացման ժամկետները սահմանվում են տվյալ կազմակերպության ինքնահսկման ծրագրում:

## ԳԼՈՒԽ 4
## ԻՆՔՆԱՀՍԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հոդված 18. Ինքնահսկման ծրագրին ներկայացվող պահանջները և ծրագրի հաստատումը

1. Ինքնահսկումն իրականացվում է տվյալ կազմակերպության համար հաստատված ինքնահսկման ծրագրին համապատասխան:

2. Ինքնահսկման ծրագիրը պետք է ներառի՝

1) արտադրական պրոցեսի ընդհանուր նկարագիրը.

2) արտադրական պրոցեսներում օգտագործվող հումքի և նյութի տեսակը և քանակը.

3) տվյալ կազմակերպության տարածքի, ներառյալ՝ սանիտարապաշտպանական գոտու շրջակա միջավայրի ելակետային իրավիճակը.

4) ինքնահսկման պարամետրերը.

5) նմուշառման կետերի անվանումը, քանակը և տեղադիրքը.

6) պարամետրերի չափումների ժամանակացույցը.

7) ինքնահսկման մեթոդները, ներառյալ՝ չափիչ սարքերի տեսակը և չափման մեթոդների զգայնության աստիճանը.

8) հաշվառման, չափումների իրականացման և շրջակա միջավայրի վրա կազմակերպության գործունեության ազդեցության գնահատման տվյալների վերաբերյալ հաշվետվությունների կամ տեղեկատվական այլ բնույթի տվյալների ներկայացման ժամանակացույցը.

9) կազմակերպությանը ներկայացվող բնապահպանական օրենսդրության պահանջների կատարմանն ուղղված միջոցառումների կիրառման հիմնավորումը, իսկ խախտումներ առաջանալու դեպքում՝ նաև դրանց վերացմանն ուղղված միջոցառումների կիրառման հիմնավորումը.

10) որակի և քանակի հսկման ապահովման մեխանիզմների, ներառյալ՝ լաբորատորիաների հավատարմագրման, սերտիֆիկացման, սարքերի ու սարքավորումների չափաբերման ու վիճակի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը.

11) արտակարգ, վթարային և միջադեպային իրավիճակների կանխարգելման կամ հետևանքների վերացման գործողությունների կիրառման ընթացակարգը.

12) շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության համալիր կանխարգելման, ներառյալ՝ աղտոտող նյութերի արտահոսքերի ու արտանետումների և արտադրական թափոնների նվազեցմանը, բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և բնապահպանական այլ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները.

13) ծրագրի ներդրման համար առկա կազմակերպչական մեխանիզմները.



14) ծրագրի ներդրման համար պահանջվող փաստացի կամ համարժեք միջոցառումների ծախսերը:

2. Կազմակերպության ինքնահսկման ծրագիրը կազմում է տվյալ կազմակերպությունը: Ինքնահսկման ծրագիրը հաստատում է լիազոր մարմինը:

3. Ինքնահսկման ծրագիրը հաստատվում է հինգ տարի ժամկետով: Կազմակերպության գործունեության ընթացքում տեխնոլոգիական կանոնակարգի, հումքի և շահագործման և(կամ) գործարկման պայմանների կամ բնապահպանական օրենսդրության պահանջների փոփոխություններ առաջանալու դեպքում, կազմակերպության կամ *լիազոր մարմնի* առաջարկով ինքնահսկման ծրագիրը պարտադիր ենթակա է վերահաստատման:

4. Լիազոր մարմնի կողմից ինքնահսկման ծրագրի հաստատման համար սահմանվում է եռամսյա ժամկետ, իսկ վերահաստատման համար՝ մեկամսյա ժամկետ:

5. Ինքնահսկման ծրագիրը հաստատվում է երկու օրինակից, որի մեկ օրինակը տրվում է կազմակերպությանը, իսկ մյուս օրինակը՝ պահվում *լիազոր մարմնում*:

## ԳԼՈՒԽ 5
## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ *ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ*

Հոդված 19. Ինքնահսկման արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը

1. Ինքնահսկման վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովում են տվյալ կազմակերպությունը և լիազոր մարմինը, որոնք պարտավոր են իրենց ինտերնետային կայք-էջում տեղադրել և թարմացնել ինքնահսկման վերաբերյալ տեղեկատվությունը՝ հայերեն լեզվով:

2. Ինքնահսկման վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է՝

1) շրջակա միջավայրի աղտոտման՝ մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների, ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի արտահոսքերի, հողերի վիճակի փոփոխության ու աղտոտման և արտադրության թափոնների վերաբերյալ տվյալները.

2) արտադրական պրոցեսում տեղի ունեցած վթարային, արտակարգ կամ միջադեպային դեպքերի մասին տվյալները.

3) ինքնահսկման ծրագիրը.

4) ազդեցության գնահատման հաշվետվությունը:

3. Շրջակա միջավայրի աղտոտման վերաբերյալ.

1) մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների և ջրային ռեսուրսներ վնասակար նյութերի արտահոսքերի մասով ինքնահսկման արդյունքների տրամադրումը լիազոր մարմնին կատարվում է ամենօրյա պարբերականությամբ՝

ա. չափման ավտոմատ համակարգ չունեցող կազմակերպությունների կողմից չափման արդյունքներն իրենց ինտերնետային կայք-էջում տեղադրվում են տվյալների մուտքագրման միջոցով.

բ. չափման ավտոմատ համակարգով ինքնահսկում իրականացնող կազմակերպությունների կողմից չափման արդյունքներն իրենց ինտերնետային կայք-էջում տեղադրվում են անմիջապես չափման ավտոմատ համակարգերից տվյալների փոխանցման միջոցով.

2) արտադրության թափոնների նկատմամբ ինքնահսկման արդյունքները կազմակերպությունները տրամադրում են ամենամսյա պարբերականությամբ՝ ստացված տվյալները կազմակերպության ինտերնետային կայք-էջում մուտքագրման և դրանք լիազոր մարմնին փոխանցման միջոցով: Լիազոր մարմինը ստացված տվյալները մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում է իր ինտերնետային կայք-էջում:

3) հողերի վիճակի փոփոխության և աղտոտման նկատմամբ ինքնահսկման արդյունքները կազմակերպությունները տրամադրում են ամենամսյա պարբերականությամբ՝ ստացված տվյալները կազմակերպության ինտերնետային կայք-էջում մուտքագրման և

դրանք լիազոր մարմնին փոխանցման միջոցով: Լիազոր մարմինը ստացված տվյալները մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում է իր ինտերնետային կայք-էջում:

4. Ինքնահսկման ծրագիրը և ազդեցության գնահատման հաշվետվությունն ինքնահսկում իրականացնող կազմակերպությունները և(կամ) լիազոր մարմինը տեղադրում են իրենց ինտերնետային կայք-էջերում՝ ինքնահսկման ծրագրի հաստատումից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ազդեցության գնահատման հաշվետվությունը՝ լիազոր մարմին ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Կազմակերպության ինտերնետային կայքի ինքնահսկման էջի կառուցվածքը հաստատում է լիազոր մարմինը:

## ԳԼՈՒԽ 6
## ԻՆՔՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 20. Ինքնահսկում իրականացնող կազմակերպությունների իրավունքները

Ինքնահսկում իրականացնող կազմակերպություններն իրավունք ունեն՝

1) չափման լաբորատոր հսկողության գործընթացում ներգրավել հավատարմագրված համապատասխան լաբորատորիա.

2) շրջակա միջավայրի վրա իր գործունեության գնահատման գործընթացում ներգրավել համապատասխան հավաստագիր ունեցող անկախ փորձագետներ և բնապահպանության բնագավառի մասնագետներ.

3) շրջակա միջավայրի վրա իր գործունեության վնասակար ազդեցության նվազեցման նպատակով ներդնել էկոլոգիապես մաքուր և ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ.

4) ինքնահսկման ծրագրում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնել լիազոր մարմնին:

Հոդված 21. Ինքնահսկում իրականացնող կազմակերպությունների պարտականությունները

Ինքնահսկում իրականացնող կազմակերպությունները պարտավոր են՝

1) ինքնահսկումն իրականացնել հաստատված բնապահպանական ծրագրին համապատասխան՝ սույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով.

2) լաբորատոր հսկողությունն իրականացնել բնապահպանության բնագավառի *լիազոր մարմնի* հետ համաձայնեցված չափման մեթոդներով.

3) չափման լաբորատոր հսկողության դեպքում ապահովել նմուշառման կետերին մոտենալու հարմարավետ և անվտանգ պայմաններ.

4) սույն օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին համապատասխան վարել առաջնային հաշվառման գրանցամատյանները.

5) սահմանված կարգով և ժամկետներում ապահովել շրջակա միջավայրի վրա իր գործունեության ազդեցության գնահատումը.

6) ձեռնարկել աղտոտող նյութերի նվազեցմանն ուղղված անընդհատ միջոցառումներ.

7) սահմանված ժամկետներում լիազոր մարմին ներկայացնել ինքնահսկման արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ և տեղեկատվություններ.

8) արտակարգ, վթարային կամ միջադեպային իրավիճակների դեպքերի ու դրանց հետևանքով համազարկային արտանետումների առկայության մասին անհապաղ իրազեկել լիազոր մարմնին.

9) բնապահպանական օրենսդրության խախտման դեպքում արձանագրել խախտումները և այդ մասին անմիջապես տեղեկացնել լիազոր մարմնին.

10) չխոչընդոտել լիազոր մարմինների կողմից կազմակերպության ինքնահսկման գործընթացի ճշտումը վերահսկողության իրականացմանը.

11) ապահովել ինքնահսկման գործընթացի թափանցիկությունն ու տեղեկատվության մատչելիությունը.



12) ինքնահսկումն իրականացնել սեփական միջոցների հաշվին:

## ԳԼՈՒԽ 7
## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 22. Սույն օրենքի պահանջները խախտելու համար պատասխանատվությունը

Կարգավորման ենթակա իրավահարաբերությունների կողմ հանդիսացող սուբյեկտները սույն օրենքով սահմանված իրենց պարտականությունները չկատարելու կամ իրավասությունները վերազանցելու կամ դրանք ոչ պատշաճ կատարելու կամ սույն օրենքի այլ պահանջները խախտելու դեպքում կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 23. Ինքնահսկման նկատմամբ վերահսկողությունը

1. Կազմակերպությունների կողմից ինքնահսկման գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է լիազոր մարմինը: Վերահսկողությունն իրականացվում է տվյալ կազմակերպության համար հաստատված ինքնահսկման ծրագրի պահանջների կատարման նկատմամբ՝ «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված կարգով :

2. Ինքնահսկման պարամետրերի չափման ավտոմատ համակարգեր ունեցող կազմակերպությունների մոտ լիազոր մարմինը վերահսկողությունն իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, իսկ վնասակար նյութերի որակական և քանակական պարամետրերի նկատմամբ՝ երեք տարին մեկ անգամ, եթե այդ ընթացքում չի արձանագրվել որևէ պարամետրի նորմատիվի գերազանցում:

## ԳԼՈՒԽ 8
## ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 24. Անցումային դրույթներ

Ինքնահսկում իրականացնող կազմակերպությունները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) մեկ տարվա ընթացքում հաստատում են իրենց արտադրության գործարկման կամ շահագործման գրանցամատյանների ձևերը,

2) ինքնահսկման ծրագրերը լիազոր մարմնի հաստատմանն են ներկայացնում տասնութ ամսվա ընթացքում:

3) երեսուն ամսվա ընթացքում ապահովում են ինքնահսկման համակարգի ներդրումը:

Հոդված 25. Եզրափակիչ դրույթ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կառավարություն

Երկրորդ ընթերցում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

### «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (11 ապրիլի 2005 թվականի ՀՕ-82-Ն, այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի վերջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 33-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի «բ)» կետից հանել «կամ արտադրական հսկում» բառերը.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կառավարություն

Երկրորդ ընթերցում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

### «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (6 դեկտեմբերի 1985 թվական, այսուհետ՝ օրենսգիրք) լրացնել 82.1. և 82.2. հոդվածներով հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 82.1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔՆԱՀՍԿՈՒՄ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ, ԻՆՔՆԱՀՍԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԿԱՄ ԱՌԱՆՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՆՔՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ

Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում չիրականացնելը, ինքնահսկման ծրագիրը հաստատման չներկայացնելը կամ առանց հաստատված ծրագրի ինքնահսկում իրականացնելը՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի չափով:
Նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

ՀՈԴՎԱԾ 82.2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ ԱՌԱՆՑ ՉԱՓԱԲԵՐՎԱԾ ՍԱՐՔԵՐԻ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ, ՉՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԿԱՄ ՉՍԵՐՏԻՖԻԿԱՑՎԱԾ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՁԵՎԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐ ՉՎԱՐԵԼԸ

Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելիս առանց չափաբերված սարքերի չափումներ իրականացնելը, չհավատարմագրված կամ չսերտիֆիկացված լաբորատորիաներում չափումներ իրականացնելը, սահմանված մեթոդների պահանջների խախտմամբ չափումներ իրականացնելը կամ սահմանված ձևին համապատասխան գրանցամատյաններ չվարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:
Նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝
առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել 169.20. և 169.21. հոդվածներով հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 169.20. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՒՄՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂՅԱԿ ՉՊԱՀԵԼԸ, ԱՂՏՈՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՍՏԻ ՏՎՅԱԼՆԵՐ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԿԱՄ ԱՂԱՎԱՂՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնող կազմակերպության կողմից արտադրության ընթացքում օգտագործվող հումքի փոփոխության, արտակարգ և վթարային դեպքերի վերաբերյալ լիազոր մարմնին տեղյակ չպահելը, աղտոտման աղբյուրների ու ճնշաման կետերի քանակի վերաբերյալ հավաստի տվյալներ չներկայացնելը կամ աղավաղված տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

ՀՈԴՎԱԾ 169.21. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱՀՍԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՊԱՀՈՎԵԼԸ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼԸ ԿԱՄ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնող կազմակերպության կողմից ինքնահսկման արդյունքների մասին տեղեկատվության հասանելիությունը չապահովելը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում չկատարելը կամ դրա վերաբերյալ հաշվետվությունը լիազորված մարմնին չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով:

Նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց *հետո մեկ տարվա ընթացքում*՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 242-րդ հոդվածի «80.1.-87-րդ» բառերը փոխարինել «80.1.-82-րդ հոդվածներով, 82.1., 82.2. և 83-87-րդ հոդվածներով» բառերով և «169.19-րդ» բառերից հետո լրացնել «169.20-րդ և 169.21-րդ» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կառավարություն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## ՈՐՈՇՈՒՄԸ

---

### «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — Ս.ՆԻԿՈՅԱՆ

19 մարտի 2012 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1238 - Լ

Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

## «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

*Հոդված 1.* «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքը լրացնել 53.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

*«Հոդված 53.1. Ընկերության բաժնետերերի ռեեստրից տվյալների տրամադրումը*

1. Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված ֆիզիկական անձ բաժնետերերի (անվանատերերի) անունը, ազգանունը, անձնագրի սերիան եւ համարը, իրավաբանական անձ բաժնետերերի (անվանատերերի) անվանումը եւ պետական գրանցման վկայականի համարը, ինչպես նաեւ այդ բաժնետերերին (անվանատերերին) պատկանող բաժնետոմսերի քանակի եւ տեսակի (դասի) վերաբերյալ տեղեկությունները բաց են եւ համապատասխան ռեեստրը վարող անձի կողմից ենթակա են տրամադրման ցանկացած անձի՝ նրա դիմումի հիման վրա՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմիններին և այլ անձանց տրամադրվում են համապատասխան վճարի դիմաց, որի նվազագույն եւ առավելագույն չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ:»:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կառավարություն

Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

## «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

*Հոդված 1.* «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 6.1-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«6.1) Բաժնետիրական ընկերության մասնակիցների ռեեստրը վարող անձի կողմից իր կողմից վարվող ռեեստրից «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53.1-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների տրամադրումը.»:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կառավարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

5 փետրվարի 2009 թվականի,
քաղ. Երևան
Ն - 420 - 4

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (հետայսու՝ օրենք) լրացնել 11.1-րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 11.1 Հայոց ազգային ինքնության տոն՝ նշվում է օգոստոսի 11-ին, իսկ դրան նախորդող 5 օրերին, օգոստոսի 6-11 (Նավասարդյան տոներ), որպես կանոն, կազմակերպվում են համահայկական միջոցառումներ (խորհրդաժողովներ, սպորտային, մշակութային եւ այլ բնույթի միջոցառումներ):»:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Աժ պատգամավորներ
Վ.Հովհաննիսյան
Լ.Գալստյան
Ա.Նռանյան
Ա.Ռուստամյան
Ա.Մինասյան
Ա.Աշոտյան
Ա.Ծահրազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

# ՈՐՈՇՈՒՄԸ

---

## «ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

19 մարտի 2009 թվականի,
քաղ. Երևան
Լ - 456 - 4

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 1991 թվականի հունիսի 17-ի Հ.Ն-0333-1 օրենքի (այսուհետ՝ օրենք) նախաբանն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետությունն երաշխավորում է խղճի և կրոնի ազատությունը և ապահովում է յուրաքանչյուրի իրավունքի իրացումը: Այս իրավունքը ներառում է կրոն, դավանանք կամ համոզմունքներ ընդունելու, չընդունելու կամ փոխելու ազատությունը և դրանք քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու իրավունքը՝ միայնակ և (կամ) այլոց հետ (համատեղ, միավորվելով):

Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

***Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8.1 հոդվածի, կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքով:***

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1.-րդ հոդվածով՝

«Հոդված 1.1. Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, բնագավառը կարգավորող օրենքներից և իրավական այլ ակտերից»:

Հոդված 4. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հավասար են օրենքի առջև՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից:

Կրոնի, դավանանքի կամ հոգևոր համոզմունքի նկատմամբ անձի իրավունքների սահմանափակումները (բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերի), կրոնական հիմքի վրա հետապնդումները կամ այլ իրավունքների խոչընդոտումը, ինչպես նաև կրոնական թշնամանքի հարուցումն առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն:»:

Հոդված 5. Օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Խղճի և կրոնի ազատության իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ հասարակության մյուս անդամների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար: »

Հոդված 6. Օրենքի 4-րդ հոդվածի երկրորդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 5-րդ հոդվածի՝

ա) առաջին մասի «ե» կետում «200» թիվը փոխարինել *«500»* թվով.

բ) լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ»կետ՝

«գ) քրիստոնեական դավանանքի դեպքում՝ դավանում են Հիսուս Քրիստոսին՝ որպես Աստված և Փրկիչ, և ընդունում են Սուրբ Երրորդությունը.»:

Հոդված 8. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունն «առաքելական» բառից հետո լրացնել «սուրբ» բառով:

Հոդված 9. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է հոգեորսությունը:

Հոգեորսություն է համարվում այլ կրոնական կամ դավանաբանական հայացքներ ունեցող կամ դրանք չունեցող քաղաքացիների նկատմամբ այն քարոզչական ներգործությունը, որի ընթացքում՝

ա) առաջարկվում կամ տրամադրվում է նյութական խրախուսմամբ,

բ) *գործադրվում է ֆիզիկական կամ հոգեբանական ճնշում կամ հարկադրանք,*

գ) ձևավորվում է առնչություն այլ կրոնական կազմակերպությունների, նրանց դավանանքի և գործունեության նկատմամբ,

դ) կիրառվում է այլ անձանց կամ կրոնի նկատմամբ վիրավորանքների արտահայտում,

զ) անձը *կրկնակի և ավելի անգամ* հետապնդվում է իր բնակարանում, աշխատավայրում, հանգստի կամ այլ վայրերում, ինչպես նաև հեռախոսազրույցով՝ առանց իր ցանկության կամ խնդրանքի:»:

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածն «առաքելական» բառից հետո լրացնել «սուրբ» բառով:

Հոդված 11. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«Արգելվում է առանց օրենքով սահմանված կարգով գրանցված և գործող տվյալ կրոնական կազմակերպության համաձայնության կրոնական խորհրդաբանության, կրոնական շինությունների (անկախ սեփականության ձևից) պատկերների և անվանումների, սրբերի անունների և պատկերների օգտագործումն ապրանքային և սպասարկման նիշերում, ֆիրմային անվանումներում կամ նշաններում, գովազդում, բացառությամբ՝ սոցիալական գովազդի: Այդ հարաբերությունները կարող են կարգավորվել պայմանագրային հիմունքներով:

Սույն հոդվածի 2-րդ մասի դրույթները չեն տարածվում ֆիզիկական անձանց գեղարվեստական ստեղծագործությունների և դրանց նկատմամբ հեղինակային իրավունք ունեցող օբյեկտների նկատմամբ:»:

Հոդված 12. Օրենքի 14-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի «համայնքը կամ» բառերը հանել, իսկ « բ»-«ե» ենթակետերով» բառերը փոխարինել «առաջին մասում, բացառությամբ՝ «ա» կետում» բառերով.

գ) 2-րդ մասի «տաս» բառը փոխարինել «երեսուն» բառով:

Հոդված 13. Օրենքի 17-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի «բ» և «գ» կետերի վերջում լրացնել « , բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:» բառերը:



բ) 2-րդ և 3-րդ մասերում «Հայաստանյայց Առաքելական եկեղեցու» բառերը կամ դրա հոլովաձևերը շարադրել «Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու» բառերով կամ դրա հոլովաձևով:

Հոդված 14. Օրենքի 18-րդ հոդվածը «Պետությունը» բառից հետո լրացնել «, բացի օրենքով սահմանված դեպքերի, » բառերով:

Հոդված 15. Օրենքի 19-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է այն կրոնական կազմակերպությունների գործունեությունը, որոնք իրենց գործունեության ընթացքում իրականացնում են կամ փորձում են իրականացնել անդամների *անձնական կյանքի, անձեռնմխելիության, առողջության և սեփականության վերահսկողություն*»:

Հոդված 16. Օրենքի 23-րդ հոդվածի՝

ա) «ա» կետում «գրանցում է կրոնական կազմակերպությունների կանոնադրությունները» բառերը փոխարինել «սույն օրենքի 14-րդ հոդվածի համապատասխան տալիս է փորձագիտական եզրակացություն» բառերով.

բ) 23-րդ հոդվածի երկրորդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

Հոդված 18. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ գրանցված և իրենց գործունեությամբ սույն օրենքի դրույթներին չհամապատասխանող կրոնական կազմակերպությունները, երեք ամսվա ընթացքում վերագրանցվում են և իրենց գործունեությունը համապատասխանեցնում սույն օրենքի դրույթներին:

Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված դեպքերում և ժամկետներում չվերագրանցված կրոնական կազմակերպությունների գործունեությունը դադարում է, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

ԱԺ պատգամավորներ

Ա. Աշոտյան
Ն.Զոհրաբյան
Վ.Դալլաքյան
Հ.Բիշարյան
Լ.Գալստյան

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 4-ի ՀՕ-528 քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 162-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 162. Անձանց իրավունքների կամ անձի դեմ ոտնձգող միավորումներ կազմելը, ղեկավարելը կամ նրանց աջակցելը, հոգեորսությամբ զբաղվելը

1. Այնպիսի կրոնական կամ հասարակական միավորում կազմելը, ղեկավարելը կամ նրանց աջակցելը, որի գործունեությունը զուգորդված է անձանց առողջությանը վնաս պատճառելով կամ անձանց այլ իրավունքների դեմ ոտնձգություններով, ինչպես նաև անձանց իրենց քաղաքացիական պարտականություններից հրաժարվելուն դրդելով՝

պատժվում է ազատազրկմամբ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Հոգեորսությամբ զբաղվելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող չորրորդ ամսից:

ԱԺ պատգամավորներ

Ա. Աշոտյան
Ն.Զոհրաբյան
Վ.Գալչարյան
Հ.Բիշարյան
Լ.Գալստյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

### «ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ) ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

27 ապրիլի 2009 թվականի,
քաղ. Երևան
Ն - 490 - 4

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

***Հոդված 1.*** «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (4 հոկտեմբերի 2005 թվականի, ՀՕ-186-Ն, այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

**«Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը կարգավորում է փաստաթղթի պարտադիր օրինակ (այսուհետ՝ պարտադիր օրինակ) հանդիսացող նյութերի հատկացման, պահպանության, հաշվառման եւ օգտագործման հետ կապված հարաբերությունները»:

**Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.**

**«Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.**

1) **փաստաթուղթ**՝ ելից տեղեկություն ունեցող, պահպանության եւ հանրային օգտագործման համար ժամանակի եւ տարածության մեջ փոխանցման ենթակա տեքստային, պատկերային, տեսաձայնային եւ (կամ) ձայնաշարային տեղեկույթ՝ ամրացված նյութական կրիչին.

2) **համակցված փաստաթուղթ**՝ ՝ փաստաթուղթ՝ միաժամանակ ամրացված տարբեր նյութական կրիչների վրա, որը ամբողջական է իր բաղկացուցիչ մասերով.

3) **չհրապարակված փաստաթուղթ**՝ փաստաթուղթ՝ նախատեսված սահմանափակ օգտագործման համար.

4) **փաստաթղթի ելից տեղեկություն**՝ տվյալների ամբողջական համալիր, որը բնութագրում է փաստաթուղթը եւ կարող է հիմք հանդիսանալ օգտագործողի տեղեկացման, վիճակագրական եւ (կամ) մատենագիտական հաշվառման համար.

5) **պարտադիր օրինակ**՝ փաստաթղթի օրինակ, որի պատրաստողը, սույն օրենքով սահմանված կարգով ու քանակով, անհատույց հատկացնում եւ առաքում է ստացողներին.

6) **փաստաթուղթ պատրաստող**՝ փաստաթղթի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն իրականացնում է փաստաթղթի պատրաստումը՝ անկախ նյութական կրիչից.

7) **պարտադիր օրինակ ստացող**՝ սույն օրենքով սահմանված կարգով ու քանակով պարտադիր օրինակը ստացող իրավաբանական անձ.

8) **անորակ պարտադիր օրինակ**՝ պարտադիր օրինակ, որի տպագրական սխալը, մեխանիկական եւ (կամ) էլեկտրոնային տվյալների վնասվածքներն ու այլ պատճառները անհնար են դարձնում ամրագրված տեղեկույթի ընկալումը»:

**Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.**

«1) Սույն օրենքը տարածվում է՝

ա. փաստաթուղթ պատրաստողի եւ պարտադիր օրինակ ստացողի վրա.

բ. Հայաստանի Հանրապետությունում պատրաստված փաստաթղթերի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց պատվերով օտարերկրյա պետություններում պատրաստված եւ Հայաստանի Հանրապետությունում իրացվող փաստաթղթերի վրա»:

**Հոդված 4. Օրենքը 4-րդ հոդվածից հետո լրացնել նոր՝ «Հոդված 4[1] »-ով հետեւյալ բովանդակությամբ.**

«Հոդված 4[1] . Սույն օրենքի նպատակը եւ խնդիրը
1) Սույն օրենքի նպատակն է՝ ազգային մշակութային ժառանգության անքակտելի մաս կազմող փաստաթղթերի մշտական պահպանությունը եւ դրանց մասին տեղեկության ապահովումը:

2) Սույն օրենքի հիմնական խնդիրն է՝ կարգավորել պարտադիր օրինակի հատկացումը, պահպանությունը, հաշվառումը եւ օգտագործումը»:

**Հոդված 5. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 5-րդ հոդվածը:**

**Հոդված 6. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ա) եւ գ) կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.**

«1) Փաստաթղթի տեսակներն են՝

ա. Հրատարակություն՝ խմբագրական մշակման ենթարկված, ինքնուրույն ձեւավորմամբ (տեքստային, նոտագրական, քարտեզագրական, պատկերահրատարակային), այդ թվում՝ պաշտոնական եւ կույրերի ու թույլ տեսնողների համար նախատեսված Բրայլի համակարգով ստեղծված արտադրանք՝ անկախ նյութական կրիչից.

գ. չհրապարակված փաստաթուղթ՝ գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական եւ տեխնոլոգիական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ, ատենախոսություններ, ավանդադրված գիտական աշխատանքներ, ալգորիթմներ եւ ծրագրեր»:

**Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի բ), գ), է) կետերը:**

**Հոդված 8. Օրենքը 6-րդ հոդվածից հետո լրացնել նոր՝ «Գլուխ 1[1] »-ով հետեւյալ բովանդակությամբ.**

«ԳԼՈՒԽ 1[1]

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»**

**Հոդված 9. Օրենքը 6-րդ հոդվածից հետո լրացնել նոր՝ «Հոդված 6[1] », «Հոդված 6[2] »-ով հետեւյալ բովանդակությամբ.**

**«Հոդված 6[1] . Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները**

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա. կազմակերպում է պարտադիր օրինակի մասին տեղեկույթի հանրային հասանելիությունը,

բ. հաստատում է պարտադիր օրինակի հաշվառման, պահպանության եւ օգտագործման կարգը՝ ըստ փաստաթղթի տեսակների,

գ. հաստատում է պարտադիր օրինակի մատենագիտության կազմման կարգը,

դ. սահմանում է փաստաթղթի ելից տեղեկություններ համարվող տվյալները եւ դրանց տրման կարգը,

ե. իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 6[2] . Կառավարության լիազորված պետական մարմնի իրավասությունները

1) Լիազորված պետական մարմինը՝

ա. մշակում է պարտադիր օրինակի՝ ըստ փաստաթղթի տեսակների պահպանության, հաշվառման, օգտագործման կարգը եւ ապահովում դրանց կիրառկումը,

բ. մշակում է պարտադիր օրինակի մատենագիտության կազմման կարգը,

գ. իրականացնում է պարտադիր օրինակի վերաբերյալ տեղեկույթի հանրային հասանելիությունը,

դ. ապահովում է հրապարակման, հրատարակման կամ թողարկման ելից տեղեկության գրանցումը՝ ըստ տեսակների,

ե. իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ»:



**Հոդված 10. Օրենքի 2-րդ գլխի վերնագիրը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.**

«ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ»

**Հոդված 11. Օրենքի 7-րդ հոդվածի վերնագիրը եւ 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ, իսկ նույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել.**

**«Հոդված 7. Պարտադիր օրինակի հատկացման ծախսերը**

1) Պարտադիր օրինակի հատկացման եւ առաքման ծախսերը ներառվում են փաստաթղթերի պատրաստման ինքնարժեքում»:

**Հոդված 12. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.**

**«Հոդված 8. Պարտադիր օրինակներ ստացողներն են՝**

1) «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հայաստանի ազգային գրադարան).

2) «Հայաստանի ազգային գրապալատ» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հայաստանի ազգային գրապալատ).

3) «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հայաստանի ազգային արխիվ).

4) «Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն)»:

**Հոդված 13. Օրենքը 8-րդ հոդվածից հետո լրացնել նոր՝ «Հոդված 8[1] », «Հոդված 8[2] » -ով հետեւյալ բովանդակությամբ.**

**«Հոդված 8[1] . Պարտադիր օրինակի հատկացումը**

1) Հայաստանի Հանրապետությունում տպագրված լրատվական միջոցների պարտադիր օրինակների հատկացումը իրականացվում է «Զանգվածային լրատվության միջոցների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2) Փաստաթուղթ պատրաստողը (անկախ թողարկման քանակից)՝ սկսած առաջին խմբաքանակի պատրաստման պահից, իսկ այլ երկրներում պատրաստված (Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործվող փաստաթղթի ելից տեղեկություն ունեցող) փաստաթուղթը՝ սկսած Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման պահից, 10-օրյա ժամկետում հանձնում է՝

ա. Հայաստանի ազգային գրադարանին՝

երկու պարտադիր օրինակ հրատարակությունից,

մեկ պարտադիր օրինակ պաշտոնական հրատարակությունից,

մեկ պարտադիր օրինակ չհրապարակված փաստաթղթից (ատենախոսություն),

մեկ պարտադիր օրինակ համակցված փաստաթղթից.

բ. Հայաստանի ազգային գրապալատին՝

մեկ պարտադիր օրինակ հրատարակությունից,

մեկ պարտադիր օրինակ պաշտոնական հրատարակությունից.

գ. Հայաստանի ազգային արխիվին՝

մեկ պարտադիր օրինակ տեսալսողական արտադրանքից,

մեկ պարտադիր օրինակ համակցված փաստաթղթից.

դ. Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնին՝

մեկ պարտադիր օրինակ պաշտոնական հրատարակությունից,

երկու պարտադիր օրինակ էլեկտրոնային հրատարակությունից,

մեկ պարտադիր օրինակ չհրապարակված փաստաթղթից (գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական եւ տեխնոլոգիական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ, ավանդադրված գիտական աշխատանքներ, ալգորիթմներ եւ ծրագրեր)»:

**Հոդված $8^2$. Պարտադիր օրինակի օգտագործման սահմանափակումները**

1) Պարտադիր օրինակի հավաքածուները չեն կարող օգտագործվել որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց, ենթակա չեն փոխանակման եւ օտարման:

2) Պարտադիր օրինակի օգտագործումը իրականացվում է «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով»:

**Հոդված 14. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածները:**

**Հոդված 15. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.**

**«Հոդված 14. Փաստաթուղթ պատրաստողի պարտականությունները եւ իրավունքները**

1) Փաստաթուղթ պատրաստողը պարտավոր է՝

ա. փոխարինել անորակ պարտադիր օրինակը՝ դրա մասին ստացողի դիմումը ստանալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում.



բ. փաստաթղթի քանակի մի մասը առավել որակյալ տարբերակով (թղթի, ձայնագրության եւ (կամ) տեսագրության որակի, կազմի, ձեւավորման եւ այլ հայտանիշների առումներով) պատրաստելու դեպքում պարտադիր օրինակը հանձնել այդ մասից.

գ. պարտադիր օրինակ հանդիսացող համակցված փաստաթուղթը հանձնել ամբողջական.

դ. անհատույց տրամադրել պարտադիր օրինակ սույն օրենքով սահմանված ստացողներին:

2) Փաստաթուղթ պատրաստողն իրավունք ունի՝

ա. անվճար ստանալ փաստաթղթի ելից տեղեկությունը.

բ. անվճար վիճակագրական տեղեկույթ ստանալ իր հանձնած պարտադիր օրինակի մասին»:

**Հոդված 16. Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.**

**«Հոդված 15. Պարտադիր օրինակ ստացողի պարտականությունները եւ իրավունքները**

1) Պարտադիր օրինակ ստացողը պարտավոր է՝

ա. իրականացնել պարտադիր օրինակի պահպանությունը, հաշվառումը եւ օգտագործումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի.

բ. ապահովել պարտադիր օրինակի մասին տեղեկույթի մատչելիությունը:

2) Պարտադիր օրինակ ստացողը իրավունք ունի՝

ա. անորակ պարտադիր օրինակը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, դիմել պատրաստողին՝ այն նորով փոխարինելու համար.
բ. պատրաստողից ստանալ պարտադիր օրինակի առավել որակյալ տարբերակով թողարկված փաստաթուղթը.
գ. համակցված փաստաթղթի ոչ ամբողջական պարտադիր օրինակ ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, դիմել պատրաստողին՝ ամբողջական համակցված փաստաթուղթը ստանալու համար»:

**Հոդված 17. Եզրափակիչ դրույթներ**

Սույն օրենքի 12-րդ հոդվածի «Հոդված $8^2$ »-ի գործողությունը տարածվում է ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ կառավարությունների որոշումներով որպես պարտադիր օրինակ հանձնված նյութերի վրա:

**Հոդված 18.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կառավարություն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Ֆինանսական համահարթեցման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

29 ապրիլի 2009 թվականի,
քաղ. Երևան
Լ - 496 - 4

Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

**Հոդված 1. Ֆինանսական համահարթեցման մասին օրենսդրությունը**

Ֆինանսական համահարթեցումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավական ակտերով:

**Հոդված 2. Օրենքի խնդիրները**

Սույն օրենքը սահմանում է ֆինանսական համահարթեցման հասկացությունը, սկզբունքները, համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգերը:

**Հոդված 3. Ֆինանսական համահարթեցման հասկացությունը**

Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև ֆինանսապես թույլ համայնքներին օժանդակելու համար նրանց նվազագույն ծախսերը ապահովելու նպատակով՝ տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման ժամանակ համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցումն է:

**Հոդված 4. Ֆինանսական համահարթեցման սկզբունքները**

Ֆինանսական համահարթեցման սկզբունքներն են՝

1. Համայնքների սեփական եկամուտների և ծախսային կարիքների հարաբերակցությունների անհամաչափության մեղմացում.
2. Պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների ոչ նպատակայնություն.
3. Համայնքների լիազորությունների իրականացման և ֆինանսական միջոցների օգտագործման ազատության և ինքնուրույնության պահպանում.
4. Պետական բյուջեից համայնքներին հատկացվող համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափի օրենքով սահմանում.
5. Ըստ առանձին համայնքների՝ սույն օրենքով սահմանված կարգով հատկացվող դոտացիաների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով հաստատում:

**Հոդված 5. Համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի ձևավորման աղբյուրը**

1. Համահարթեցման դոտացիաների ֆինանսական միջոցները ձևավորվում են պետական բյուջեի միջոցներից և հանդիսանում են համայնքների բյուջեներին հատկացվող ոչ նպատակային պետական տրանսֆերտներ:

2. Համահարթեցման դոտացիաներ ստացող համայնքները պահպանում են սեփական պատասխանատվությամբ գործելու իրավունքը և այդ ֆինանսական միջոցների օգտագործման ազատությունը:

**Հոդված 6. Համահարթեցման դոտացիաներ ստացող համայնքները**

Սույն օրենքով սահմանված ֆինանսական միջոցների բաշխման կարգի հիման վրա համահարթեցման դոտացիաներ չեն կարող ստանալ այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածությունը չի բավարարում համահարթեցման դոտացիա ստանալու համար սույն օրենքի 8 –րդ և/կամ 10 –րդ հոդվածներով նախատեսված պահանջներին:

**Հոդված 7. Համահարթեցման դոտացիաների հաշվարկման գործոնները**

1.Համահարթեցման դոտացիաները հաշվարկվում են ըստ առանձին համայնքների բյուջեների:Համահարթեցման դոտացիաները հատկացվում են երկու գործոններով՝

1) Բնակչությամբ փոքր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նվազագույն ծախսերի ապահովում (այսուհետ "ա" գործոն).
2) Համայնքների բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային միջոցների անհավասարաչափության մեղմացում (այսուհետ "բ" գործոն)՝

"ա" գործոն - դոտացիաների բաշխում՝ ըստ համայնքի մասշտաբի գործակցի - $Դ^Մ$,

"բ" գործոն - դոտացիաների բաշխում՝ ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի -$Դ^{ԲԱ}$:

2. Համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի 10 տոկոսը բաշխվում է "ա" գործոնով, իսկ 90 տոկոսը՝ "բ" գործոնով:

**Հոդված 8. Համահարթեցման դոտացիաների "ա" գործոնով հաշվարկման կարգը**

1. Սույն օրենքի "ա" գործոնով համահարթեցման դոտացիաների բաշխումն իրականացվում է ըստ մասշտաբի գործակցի այն համայնքների միջև, որոնց մասշտաբի գործակիցը բարձր է բոլոր համայնքների մասշտաբի գործակցի միջին ցուցանիշից: Համայնքը "ա" գործոնով համահարթեցման դոտացիա է ստանում, եթե նրա մասշտաբի գործակիցը բավարարում է հետևյալ պահանջին՝

$(ՄԳ^i - ՄԳ^{միջին})>0$, որտեղ՝

$ՄԳ^i$ - 9 – րդ հոդվածով սահմանված i-րդ համայնքի մասշտաբի գործակիցն է,

$ՄԳ^{միջին}$ - բոլոր համայնքների մասշտաբի գործակցի միջին կշռված ցուցանիշն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$\text{ՄԳ}^{\text{միջին}} = \text{ԳՈՒՄ} (\text{ՄԳ}^{i} \times \text{Բ}_i) / \text{Բ}_{\text{ՀՀ}}$ , որտեղ՝

$\text{Բ}_i$ - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$\text{Բ}_{\text{ՀՀ}}$ - համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ),

2.Համայնքի բնակչության թիվը տվյալ համայնքի տարածքում հաշվառված բնակչության թիվն է՝ հաշվարկվող տարվան նախորդող տարվա տարեսկզբի դրությամբ:

3.Ըստ համայնքի մասշտաբի գործակցի՝ համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի հաշվակման բանաձևն է.

$\text{Դ}^{\text{Մ}} = 0.1 \times \text{Դ}$ , որտեղ՝

$\text{Դ}^{\text{Մ}}$ - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող՝ դոտացիայի գումարն է,

Դ - համահարթեցման համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարն է:

4.Ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի գումարը հավասարապես բաշխվում է, այդ դոտացիան ստացող բոլոր համայնքների միջև և հավասար է՝

$\text{Դ}_i^{\text{մասշ}} = \text{Դ}^{\text{Մ}} / \text{ՀԹ}^{\text{մասշ}}$

$\text{Դ}_i^{\text{մասշ}}$ - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող մեկ համայնքի դոտացիայի չափն է,

$\text{ՀԹ}^{\text{մասշ}}$ - ըստ մասշտաբի գործակցի դոտացիա ստացող համայնքների թիվն է:

5."ա" գործոնով համայնքի դոտացիա ստանալը չի բացառում, նույն համայնքին դոտացիա ստանալ նաև "բ" գործոնով: "ա" գործոնով հատկացվող դոտացիայի միջոցները հաշվի են առնվում նույն համայնքների նոր եկամտային ունակության գործակցի հաշվարկման համար:

### Հոդված 9. Մասշտաբի գործակցի հաշվարկման կարգը

1. Մասշտաբի գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման մեկ շնչին ընկնող ծախսերի վրա համայնքի բնակչության թվաքանակի ազդեցությունն է:
2. Մասշտաբի գործակիցը հաշվարկվում է՝

$\text{ՄԳ}^{i} = ((1-\alpha) \times \text{Բ}_i + \alpha \times \text{Բ}_{\text{միջ}}) / \text{Բ}_i$ , որտեղ՝

$\text{ՄԳ}^{i}$ - i-րդ համայնքի մասշտաբի գործակիցն է,

$\text{Բ}_i$ - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$\text{Բ}_{\text{միջ}}$ - ՀՀ մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվն է,

$\alpha$ - համա յնքային ծախսերի ֆիքսված բաղադրիչն արտացոլող հաստատունն է,

$\text{Բ}_{\text{միջ}} = \text{Բ}_{\text{ՀՀ}} / \text{Հ}_{\text{ՀՀ}}$, որտեղ՝

$\text{Բ}_{\text{ՀՀ}}$ - համայնքների բնակչության թվի հանրագումարն է



(ՀՀ բնակչության թիվ),

$\text{Հ}_{\text{ՀՀ}}$ - ՀՀ համայնքների ընդհանուր թիվը

3. Համայնքային ծախսերի ֆիքսված բաղադրիչը հաշվարկվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ՀՀ բոլոր համայնքների վերջին երեք տարվա փաստացի տվյալների հիման վրա՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

### Հոդված 10. Համահարթեցման դոտացիաների "բ" գործոնով հաշվարկման կարգը

1. Համահարթեցման դոտացիաներ՝ ըստ համայնքների բյուջետային ապահովվածության գործակցի, "բ" գործոնով ստանում են բոլոր այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածության գործակիցը՝ ներառյալ «ա» գործոնով հատկացված դոտացիան, փոքր է բյուջետային ապահովվածության սույն օրենքով սահմանված մակարդակի ցուցանիշից:

2. Ըստ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի՝ համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարը ("բ" գործոն) հաշվարկվում է՝

$\text{Դ}^{\text{ԲԱ}} = \text{Դ} - \text{Դ}^{\text{Մ}}$ , որտեղ՝

$\text{Դ}^{\text{ԲԱ}}$ - "բ" գործոնով, ըստ բյուջետային ապահովվածության գործակցի բաշխվող դոտացիայի գումարն է,

Դ - համահարթեցման համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարն է,

$\text{Դ}^{\text{Մ}}$ - "ա" գործոնով, ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի գումարն է:

3. Ըստ բյուջետային ապահովվածության գործակցի՝ "բ" գործոն, դոտացիայի բաշխումն իրականացվում է համայնքի եկամտային ունակության և ծախսային կարիքների գործակիցների հարաբերության ցուցանիշին համապատասխան: Այդ ցուցանիշը հաշվարկվում է՝ հաշվի առնելով համայնքներին՝ ըստ մասշտաբի գործակցի "ա" գործոնով հատկացված դոտացիաները՝ որպես համայնքի բյուջեի եկամուտ: Համայնքի նոր եկամտային ունակության գործակիցը, հաշվարկվում է՝

$\text{ԵՈՒԳ}_i^{\text{Ա}} = [(\text{ԵՈՒ}_i + \text{Դ}_i^{\text{մասշ}}) / \text{Բ}_i)] / [(\text{ԵՈՒ} + \text{Դ}^{\text{Մ}}) / \text{Բ}_{\text{ՀՀ}})$ , որտեղ՝

$\text{ԵՈՒԳ}_i^{\text{Ա}}$ - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է "ա" գործոնով դոտացիայի բաշխումից հետո,

$\text{ԵՈՒ}_i$ - i-րդ համայնքի եկամտային ունակությունն է մինչև "ա" գործոնով դոտացիայի բաշխումը,

$\text{Բ}_i$ - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

ԵՈՒ - բոլոր համայնքների եկամտային ունակության հանրագումարն է մինչև "ա" գործոնով դոտացիայի բաշխումը,

$\text{Դ}_i^{\text{մասշ}}$ - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող՝ մեկ համայնքի դոտացիայի չափն է,

$\text{Դ}^{\text{Մ}}$ - "ա" գործոնով ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարն է,

$\text{Բ}_{\text{ՀՀ}}$ - ՀՀ բնակչության թիվը:

4. "ա" գործոնով դոտացիայի բաշխման արդյունքում համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկման բանաձևն է՝

$ԲԱԳ_i^Ա = ԵՈՒԳ_i / ԾԿԳ_i$ , որտեղ՝

$ԲԱԳ_i^Ա$ - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է "ա" գործոնով դոտացիայի բաշխումից հետո,

$ԵՈՒԳ_i^Ա$ - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է "ա" գործոնով դոտացիայի բաշխումից հետո,

$ԾԿԳ_i$ - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է:

5. Ըստ բյուջետային ապահովվածության գործակցի՝ "բ" գործոնով դոտացիաներ են ստանում այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածության գործակիցը համահարթեցման սահմանային մակարդակի արժեքից ցածր է:
Սույն օրենքով սահմանվում է համահարթեցման սահմանային մակարդակի այնպիսի արժեք, որի դեպքում՝ «բ» գործոնով բաշխվող ֆինանսական միջոցները կարող են լրացնել դոտացիա ստացող համայնքների բյուջետային ապահովվածության և համահարթեցման մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսը:

6. "բ" գործոնով յուրաքանչյուր համայնքին տրամադրվող համահարթեցման դոտացիան հավասար է յուրաքանչյուր համայնքի բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսին:
Յուրաքանչյուր համայնքի բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած ամբողջ տարբերությունը հաշվարկվում է՝

$ԳՈՒՄ_i^{ՀՍՄ} = (ՀՍՄ - ԲԱԳ_i^Ա) X P_i X ԾԿԳ_i X Ե_{Միջ}^{1շնչ}$ , որտեղ՝

$ԳՈՒՄ_i^{ՀՍՄ}$ - i-րդ համայնքի համար անհրաժեշտ գումարի չափն է, որը կբավարարի ամբողջությամբ լրացնելու այդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի տարբերությունը,

ՀՍՄ - համահարթեցման սահմանային մակարդակն է,

$ԾԿԳ_i$ - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է,

$P_i$ - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$Ե_{Միջ}^{1շնչ}$ - մեկ շնչին ընկնող միջին համայնքային եկամուտներն է, ներառյալ «ա» գործոնով տրված դոտացիան:

$$Ե_{Միջ}^{1շնչ} = \frac{\sum ԵՈՒ_i + Դ^Ա}{P_{ՀՀ}}$$ , որտեղ՝

$ԵՈՒ_i$ - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է ,

$Դ^Ա$ - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարն է,

$P_{ՀՀ}$ - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվը):

7. Համայնքներին «բ» գործոնով տրամադրվող դոտացիաները հաշվարկվում են՝

$Դ_i^{ԲԱ} = 0,75 X ԳՈՒՄ_i^{ՀՍՄ}$, որտեղ՝

$Դ_i^{ԲԱ}$ - i-րդ համայնքին "բ" գործոնով տրվող դոտացիայի գումարն է,

$ԳՈՒՄ_i^{ՀՍՄ}$ - i-րդ համայնքի համար անհրաժեշտ գումարի չափն է, որը կբավարարի ամբողջությամբ լրացնելու այդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի տարբերությունը:

Հոդված 11. Համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի եկամտային ունակության և ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցների հարաբերությունը, որի հիման վրա իրականացվում է «բ» գործոնով համահարթեցման դոտացիայի հաշվարկը, տվյալ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է:

2. Համայնքների բյուջետային ապահովվածության գործակիցը հաշվարկվում է՝

$ԲԱԳ_i = ԵՈՒԳ_i / ԾԿԳ_i$ , որտեղ՝

$ԲԱԳ_i$ - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է,

$ԵՈՒԳ_i$ - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է,

$ԾԿԳ_i$ - i-րդ համայնքի ծախսային կարիքների գործակիցն է:

Հոդված 12. Համայնքի եկամտային ունակության գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի եկամտային ունակության գործակիցը՝ համայնքների բյուջեների եկամուտներին օրենքով ամրագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի՝ տվյալ համայնքում և հանրապետությունում մեկ շնչին ընկնող գումարների հարաբերությունն է:

2. Համայնքի եկամտային ունակությունը տվյալ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված հետևյալ եկամտատեսակների հանրագումարն է՝

1)Հողի հարկի հաշվարկային գումարի ցուցանիշ.

2)Գույքահարկի հաշվարկային գումարի ցուցանիշ.

ա. Համայնքի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային գումարի ցուցանիշները
յուրաքանչյուր համայնքի գծով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված՝ այդ համայնքի բյուջե հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարում վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան գումարներն են (առանց հողի հարկի և գույքահարկի գծով՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա տարեսկզբի դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա

ընթացքում հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների), ավելացված Հայաստանի Հանրապետության օրենքներով և համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպությունների հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների հաշվարկային տարվա բյուջեներում եկամուտների կորուստների գումարները:

3) Մասհանվող հարկերի հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի ցուցանիշ

4) Պետական տուրքերի հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի ցուցանիշ:

3. Համայնքի եկամտային ունակությունը հաշվարկվում է՝

$\text{ԵՈՒ}_i = \text{ՀՀ}_i + \text{ԳՀ}_i + \text{ՄՀ}_i + \text{ՊՏ}_i$ , որտեղ՝

$\text{ՀՀ}_i$ - i-րդ համայնքի հողի հարկի հաշվարկային գումարի ցուցանիշն է,

$\text{ԳՀ}_i$ - i-րդ համայնքի գույքի հարկի հաշվարկային գումարի ցուցանիշն է,

$\text{ՄՀ}_i$ - I-րդ համայնքի մասհանվող հարկերն են,

$\text{ՊՏ}_i$ - i-րդ համայնքի պետական տուրքերն են:

4. Համայնքի եկամտային ունակության գործակիցը հաշվարկվում է՝

$\text{ԵՈՒԳ}_i = (\text{ԵՈՒ}_i / \text{Բ}_i) / (\text{ԵՈՒ} / \text{Բ}_{\text{ՀՀ}})$ , որտեղ՝

$\text{ԵՈՒԳ}_i$ - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է,
$\text{ԵՈՒ}_i$ - i-րդ համայնքի եկամտային ունակությանն է,
$\text{Բ}_i$ - i-րդ համայնքի բնակչության թիվն է,
$\text{ԵՈՒ}$ - բոլոր համայնքների եկամտային ունակության հանրագումարն է ,
$\text{Բ}_{\text{ՀՀ}}$ - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ):

Հոդված 13.Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը

1. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը տվյալ համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի մեկ շնչին ընկնող սույն օրենքով սահմանված ծախսային գործոնների գործակիցների հանրագումարն է:

2. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի վրա ազդում են բազմաթիվ գործոններ: Ծախսային կարիքի գործակիցն ուղղակիորեն կապված է՝

1) կիրառվող ծախսային գործոնների տեսակներից և դրանց գործակիցների արժեքից,

2) համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցում յուրաքանչյուր ծախսային գործոնի գործակցի (այսուհետ ծախսային գործակից) տեսակարար կշռից (բաժնեմասից):

3. Հայաստանի Հանրապետության համայնքների և դրանց վերապահված պարտադիր լիազորությունների իրականացման առանձնահատկություններից ելնելով՝ սույն օրենքում կիրառվում են ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի վրա առավել ազդեցություն ունեցող այնպիսի ծախսային գործակիցներ, որոնց վերաբերյալ տվյալները չափելի, մատչելի և հավաստի են:



4. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված հետևյալ ծախսային գործակիցներով և իրենց համապատասխան տեսակարար կշիռներով՝

1) Մասշտաբի գործակից՝ $Կ^{\text{ՄԳ}}$ - 25 տոկոս.

2) Տրանսպորտային մատչելիության գործակից՝ $Կ^{\text{ՏՄԳ}}$ - 15 տոկոս.

3)Համայնքի ծառայությունների որակի գործակից՝ $Կ^{\text{ԾՈԳ}}$ - 10 տոկոս.

4)Համայնքի բարձրադիրության գործակից ՝ $Կ^{\text{ԲԳ}}$ - 15 տոկոս.

5)Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից՝ $Կ^{\text{ԲՔԳ}}$ - 25 տոկոս.

6)Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից՝ $Կ^{\text{ԲՏԿԳ}}$ - 10 տոկոս.

5. Մասշտաբի ծախսային գործակցի հաշվարկման կարգը ներկայացված է 9-րդ հոդվածում:

Հոդված 14. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործակցի հաշվարկման կարգը

1. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա նախկին շրջկենտրոնից, մարզկենտրոնից և Երևանից համայնքի հեռավորության ազդեցությունն է:

2. Տրանսպորտային մատչելիության գործակիցը հաշվարկվում է՝

$$\text{ՏՄԳ}^i = 1 + (0,1 \times \text{Հ}_i^{\text{Մայր}} + 0,3 \times \text{Հ}_i^{\text{Մարզ}} + 0,6 \times \text{Հ}_i^{\text{Տարա}}) / (0,1 \times \text{Հ}_{\text{միջ}}^{\text{Մայր}} + 0,3 \times \text{Հ}_{\text{միջ}}^{\text{Մարզ}} + 0,6 \times \text{Հ}_{\text{միջ}}^{\text{Տարա}}),$$ որտեղ՝

$\text{ՏՄԳ}^i$ - I-րդ համայնքի տրանսպորտային մատչելիության գործակիցն է,

$\text{Հ}_i^{\text{Մայր}}$ - i-րդ համայնքի հեռավորությունն է մայրաքաղաքից,

$\text{Հ}_i^{\text{Մարզ}}$ - i-րդ համայնքի հեռավորությունն է մարզկենտրոնից,

$\text{Հ}_i^{\text{Տարա}}$ - i-րդ համայնքի հեռավորությունն է նախկին շրջկենտրոնից,

$\text{Հ}_{\text{միջ}}^{\text{Մայր}}$ - բոլոր համայնքների միջին հեռավորությունն է մայրաքաղաքից,

$$\text{Հ}_{\text{միջ}}^{\text{Մայր}} = \sum \text{Հ}_i^{\text{Մայր}} / \text{Հ}_{\text{ՀՀ}}$$ որտեղ՝

$\sum \text{Հ}_i^{\text{Մայր}}$ - ՀՀ բոլոր համայնքների՝ մայրաքաղաքից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

$\text{Հ}_{\text{ՀՀ}}$ - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է,

$\text{Հ}_{\text{միջ}}^{\text{Մարզ}}$ - համայնքների միջին հեռավորությունն է մարզկենտրոնից,

$$\text{Հ}_{\text{միջ}}^{\text{Մարզ}} = \sum \text{Հ}_i^{\text{Մարզ}} / \text{Հ}_{\text{ՀՀ}}$$ որտեղ՝

$\sum \text{Հ}_i^{\text{Մարզ}}$ - ՀՀ բոլոր համայնքների՝ իրենց մարզի մարզկենտրոնից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

$\text{Հ}_{\text{ՀՀ}}$ - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է,

$Հ_{\text{միջ}}^{\text{Ցարա}}$ - համայնքների միջին հեռավորությունն է իրենց նախկին շրջկենտրոնից,

$Հ_{\text{միջ}}^{\text{Ցարա}} = \sum Հ_i^{\text{Ցարա}} / Հ_{\text{ՀՀ}}$ որտեղ՝

$\sum Հ_i^{\text{Ցարա}}$ - ՀՀ բոլոր համայնքների՝ իրենց նախկին շրջկենտրոնից հեռավորությունների հանրագումարն է,

$Հ_{\text{ՀՀ}}$ - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է:

Հոդված 15. Համայնքային ծառայությունների որակի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

1.Համայնքային ծառայության որակի ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքային ծառայությունների որակի ազդեցությունն է: Համայնքային ծառայությունների որակի գործակիցը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ համայնքի կարգավիճակից բխող տարբերակված պահանջներով:

2. Համայնքի ծառայության որակի գործակիցը հաշվարկվում է՝

$ԾՈԳ^i = Գ^{\text{ծոգ}}_i$ , որտեղ՝

$ԾՈԳ^i$ - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակիցն է,

$Գ^{\text{ծո}}_i$ - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակցի արժեքն է:

3. Համայնքները բաժանված են երեք խմբերի՝ իրենց համապատասխան ծառայությունների որակի գործակիցների՝

1) $Գ^{\text{ծոգ}}$ =1.25 գործակցով համայնքներ, որոնց ցանկը հաստատվում է կառավարության որոշմամբ.

2) $Գ^{\text{ծոգ}}$ =1.1 գործակցով քաղային և քաղաքային համայնքները՝ բացառությամբ

առաջին խմբում ընդգրկվածների.

3) $Գ^{\text{ծոգ}}$ =1.0 գործակցով բոլոր համայնքները՝ բացառությամբ առաջին և երկրորդ

խմբերում ընդգրկվածների:

Հոդված 16. Համայնքի բարձրադիրության ծախսային գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի բարձրադիրության ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բարձրադիրության ազդեցությունն է:

2. Համայնքի բարձրադիրության գործակիցը հաշվարկվում է՝

$ԲԳ^i = Գ^{\text{ԲԲ}}_i$ , որտեղ՝

$ԲԳ^i$ - i-րդ համայնքի բարձրադիրության գործակիցն է,



$Գ^{\text{ԲԲ}}_i$ - i-րդ համայնքի բարձրադիրության գործակցի արժեքն է:

3. Համայնքները բաժանված են երեք խմբերի՝ իրենց համապատասխան բարձրադիրության գործակիցների՝

1) ԲԳ =1.0 գործակցով համայնքներ, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից մինչև 1700մ է.

2) ԲԳ =1.2 գործակցով համայնքները, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից 1700-2000մ է.

3) ԲԳ =1.4 գործակցով համայնքները, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից 2000մ ավել է.

Հոդված 17. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ազդեցությունն է:

2. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցը հաշվարկվում է՝

$ԲՔԳ^i = 1 + 0,2(ԲՆԹ_i - 1)$ , որտեղ՝

$ԲՔԳ^i$ - I-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցն է,

$ԲՆԹ_i$ - I-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվն է:

Հոդված 18. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

1. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի ազդեցությունն է:

2. Բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցը հաշվարկվում է՝

$ԲՏԿԳ^i = (1 + (Բ_i^{Ե} + Բ_i^{Ծ}) / Բ_i) / (1 + (Բ^{Ե} + Բ^{Ծ}) / Բ_{\text{ՀՀ}})$ , որտեղ՝

$ԲՏԿԳ^i$ - i-րդ համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցն է,

$Բ_i^{Ե}$ - i-րդ համայնքի 0-16 տարեկան բնակչության թիվն է,

$Բ_i^{Ծ}$ - i-րդ համայնքի կենսաթոշակային տարիքի բնակչության թիվն է,

$Բ_i$ - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$Բ^{Ե}$ - ՀՀ 0-16 տարեկան բնակչության թիվն է,

$Բ^{Ծ}$ - ՀՀ կենսաթոշակային տարիքի բնակչության թիվն է,

$Բ_{\text{ՀՀ}}$ - ՀՀ համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ):

Հոդված 19. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի հաշվարկման բանաձևը

1. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը հավասար է մասշտաբի, տրանսպորտային մատչելիության, համայնքի ծառայությունների ոլորտի, համայնքի բարձրադիրության, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի, բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործակիցների հանրագումարին՝ իրենց համապատասխան տեսակարար կշիռներով:

2. Համայնքի ծախսային կարիքի գործակցի հաշվարկման ամփոփ բանաձևն է՝

$$\text{ԾԿԳ}^{i}_{\text{հաշ.}} = \sum (\text{Կ}_n \times \text{ԾԿԳ}_n), \quad \text{որտեղ՝}$$

$\text{Կ}_n^{i}$ - i-րդ համայնքի n - րդ ծախսային գործակիցի տեսակարար կշիռն է,

$\text{ԾԿԳ}^{i}$ - i-րդ համայնքի n - րդ ծախսային գործակիցն է,

$$\text{ԾԿԳ}^{i}_{\text{հաշ.}} = \text{Կ}^{\text{ՄԳ}} \times \text{ՄԳ}^{i} + \text{Կ}^{\text{ՏՄԳ}} \times \text{ՏՄԳ}^{i} + \text{Կ}^{\text{ԾՈԳ}} \times \text{ԾՈԳ}^{i} + \text{Կ}^{\text{ԲԳ}} \times \text{ԲԳ}^{i} + \text{Կ}^{\text{ԲՔԳ}} \times \text{ԲՔԳ}^{i} + \text{Կ}^{\text{ԲՏԿԳ}} \times \text{ԲՏԿԳ}^{i}$$

$$\text{ԾԿԳ}^{i}_{\text{հաշ.}} = 0.25 \times \text{ՄԳ}^{i} + 0.15 \times \text{ՏՄԳ}^{i} + 0.1 \times \text{ԾՈԳ}^{i} + 0.15 \times \text{ԲԳ}^{i} + 0.25 \times \text{ԲՔԳ}^{i} + 0.1 \times \text{ԲՏԿԳ}^{i}$$

3. Համայնքների ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցները բյուջետային ապահովվածության գործակիցների հաշվարկման համար նորմավորվում են հետևյալ բանաձևով՝

$$\text{ԾԿԳ}^{i} = \text{ԾԿԳ}^{i}_{\text{հաշ.}} / \text{ԾԿԳ}^{\text{միջին}}, \quad \text{որտեղ՝}$$

$\text{ԾԿԳ}^{i}$ - i-րդ համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի նորմավորված ցուցանիշն է,

$\text{ԾԿԳ}^{\text{միջին}}$ - բոլոր համայնքների ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցների միջին կշռված ցուցանիշն է,

$$\text{ԾԿԳ}^{\text{միջին}} = \text{ԳՈՒՄ}\,(\text{ԾԿԳ}^{i} \times \text{Բ}_i) / \text{Բ}_{\text{ՀՀ}}, \quad \text{որտեղ՝}$$

$\text{Բ}_{\text{ՀՀ}}$ - ՀՀ համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ):

Հոդված 20. Դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգերը

1. Համահարթեցման դոտացիաների հաշվարկման մեջ օգտագործվող՝ համայնքներին վերաբերող տվյալների աղբյուրներն են՝

1) ծախսային գործակիցների տվյալների համար՝ ՀՀ ոստիկանությունը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ՀՀ մարզպետարանները և ՀՀ համայնքները,



2) եկամտային ունակության տվյալների համար՝ համայնքներն ու պետական հարկային ծառայությունը՝ յուրաքանչյուրն իր մասով:

2. Դոտացիաների հաշվարկման սույն օրենքով սահմանված գործակիցները և "ա" և "բ" գործոններով բաշխվող դոտացիաների գումարների բաժնեմասերի հարաբերությունները ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի նկատմամբ կարող են փոփոխվել ոչ շուտ, քան երեք տարին մեկ անգամ:

3. Համայնքներին հատկացվող համահարթեցման դոտացիաների գումարները հաստատվում են պետական բյուջեի մասին օրենքով: Դոտացիաները համայնքներին հատկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դոտացիաների հաշվարկներ կատարելու համար լիազորված պետական մարմինը:

4. Դոտացիաների հաշվարկներ կատարելու համար լիազորված պետական մարմինը բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում իր պաշտոնական վեբ - կայքում հրապարակում և տարածքային կառավարման մարմինների միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է պետական մարմինների կողմից հաշվառվող՝ համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառված ելակետային տվյալների ցուցանիշները:

5. Համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկման համար անհրաժեշտ ելակետային տվյալները լիազորված մարմին ներկայացման, համահարթեցման դոտացիաների հաշվարկման և հատկացման բնագավառում պետության և համայնքների միջև առաջացող սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ:

6. Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց համայնքներին հատկացված համահարթեցման դոտացիայի գումարի չափը կարող են վիճարկել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնում և դատարանում:

7. Համայնքների համահարթեցման դոտացիաները հատկացվում են հավասար չափաբաժիններով յուրաքանչյուր ամսվա վերջում, պետական ֆինանսների կառավարման լիազորված մարմնի տեղական գանձապետական ստորաբաժանումների՝ յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշվի միջոցով:

Հոդված 21. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում՝

1) 2010 թվականի բյուջետային տարվա և դրան հաջորդող բյուջետային տարիների համար ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկների կատարման մասով՝ հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը,

2) Նշված օրենքի պահանջների համաձայն ֆինանսական համահարթեցման դոտացիաների հատկացման մասով՝ 2010 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 24 նոյեմբերի 1998 թ. – ի «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՕ-262 ՀՀ օրենքը:

ՀՀ կառավարություն

Առաջին ընթերցում

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՕՐԵՆՔԸ

### «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության (24 հունիսի 1997 թվականի, ՀՕ-137) օրենքի 21-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասի երկրորդ պարբերությունում.

1) «պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով» բառերը փոխարինել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն կառավարության սահմանած իրավական հսկողության բարձրագույն մարմնի (այսուհետ՝ իրավական հսկողության բարձրագույն մարմին) միջոցով» բառերով, իսկ «ըստ առանձին համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաների, ինչպես նաեւ» բառերը փոխարինել «ինչպես նաեւ ըստ առանձին համայնքների» բառերով,

2) «Լիազորված» բառը փոխարինել «Պետական լիազորված» բառերով, իսկ «լիազորված մարմին ուղղակիորեն կամ անուղղակի՝ այլ պետական մարմինների միջոցով» բառերը հանել,

3) լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Ըստ առանձին համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիայի հաշվարկները կատարելու համար կառավարության լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ դոտացիայի գումարներն հաշվարկող մարմին) առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ընթացակարգով եւ ժամկետներում տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է վերջիններիս համար պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներ ըստ առանձին համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաների (այս հոդվածում այսուհետ՝ դոտացիա) գումարների հաշվարկման համար անհրաժեշտ՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հաշվառվող ելակետային տվյալների կազմի, դրանց հաշվարկման եւ ներկայացման կարգի ու ժամկետների մասին:»:

2. 4-րդ մասի փակագծից հետո՝ «առաջիկա» բառից առաջ լրացնել «, իսկ դոտացիայի գումարներն հաշվարկող մարմինը՝ դոտացիայի գումարի ըստ առանձին համայնքների բաշխումը» բառերը:

3. 4.1-րդ մասի.

1) «ըստ առանձին համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաների եւ» բառերը հանել, իսկ «փոխհատուցվող գումարների» բառերից հետո լրացնել «ըստ առանձին համայնքների» բառերը.

2) լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Տեղական ինքնակառավարման մարմինները պետական բյուջեից հատկացվող դոտացիաների գումարների ըստ առանձին համայնքների հաշվարկման համար անհրաժեշտ՝ իրենց կողմից հաշվառվող ելակետային տվյալները դոտացիայի գումարներն հաշվարկող մարմնից ստացված մեթոդական ցուցումներով սահմանված ծավալով, կարգով եւ ժամկետում ներկայացնում են դոտացիայի գումարներն հաշվարկող մարմին:»:

4. 4.2-րդ մասի «ֆինանսական համահարթեցման դոտացիայի (այսուհետեւ՝ դոտացիա)» բառերը փոխարինել «դոտացիայի» բառով:

5. 4.2-րդ եւ 4.4-րդ մասերի «լիազորված մարմնում» բառերը փոխարինել «դոտացիայի գումարներն հաշվարկող մարմնում» բառերով:

6. 4.3-րդ մասի «լիազորված մարմինը» բառերը փոխարինել «դոտացիայի գումարներն հաշվարկող մարմինը» բառերով:

7. 5-րդ մասի «պետական կառավարման տարածքային մարմինների» բառերը փոխարինել «իրավական հսկողության բարձրագույն մարմնի» բառերով:

***Հոդված 2.*** Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում «եռամյա» բառը փոխարինել «քառամյա» բառով, իսկ 4-րդ մասում «պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով» բառերը հանել:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող օրվանից:

ՀՀ կառավարություն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

26 նոյեմբերի 2009 թվականի,
քաղ. Երևան
Ն - 598 - 4

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի հունիսի 11-ի ՀՕ-105-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում ավելացնել «ժ.1» կետ հետեւյալ բովանդակությամբ.

«*ժ.1. Հայաստանի Հանրապետության վաստակավոր գրադարանավար* »:

***Հոդված 2.*** Օրենքի 13-րդ հոդվածից հետո ավելացնել «Հոդված 13.1» հետեւյալ բովանդակությամբ.

«*Հոդված 13.1* Վաստակավոր գրադարանավարի պատվավոր կոչումը

Վաստակավոր գրադարանավարի պատվավոր կոչում է շնորհվում գրադարանային գործի բնագավառում աշխատանքային երկարամյա փորձ, մասնագիտական բացառիկ կարողություններ, վաստակ եւ նվիրում ցուցաբերած գրադարանավարներին, ովքեր իրենց գործունեությամբ խթանել են ոլորտի զարգացումը, նպաստել հանրության կրթության ու դաստիարակության գործին, հոգեւոր-մշակութային արժեքների հանրահռչակմանն ու տարածմանը»:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ազգային ժողովի պատգամավորներ

Լ.Գալստյան

Վ.Հովհաննեսյան

Մ.Մանուկյան

Ա.Մինասյան

Ա.Բախշյան

Հ.Բիշարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

---

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

22 փետրվարի 2010 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 668 - Լ

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին

***Հոդված 1.*** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի ՀՕ-248 քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ պարբերություններով.

«Անձինք, որոնց գործողությունների կապակցությամբ տրված է եղել հանցագործության մասին հաղորդումը, տեղեկացվում են քրեական գործի հարուցումը մերժված լինելու մասին, ինչպես նաեւ այն մասին, որ ցանկության դեպքում կարող են դիմել եւ ստանալ որոշման օրինակը:

Հանցագործության մասին հաղորդում տված, ինչպես նաեւ տրված հաղորդման ելքով անմիջականորեն շահագրգռված ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին հաղորդումը ստանալու պահից իրավունք ունեն ծանոթանալու նյութերին, որոնցով մերժվել է քրեական գործի հարուցումը եւ դրանցից կատարելու քաղվածքներ ու պատճենահանումներ ցանկացած ծավալով»:

***Հոդված 2.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

**ԱԺ պատգամավոր**

**Լ.Ալավերդյան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## ՈՐՈՇՈՒՄԸ

---

### «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

17 մայիսի 2010 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 739 - Լ

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

*ՀՈԴՎԱԾ 1.* Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում (1985 թվականի դեկտեմբերի 6) կատարել հետեւյալ լրացումները՝

1) լրացնել նոր $47^{7}$ -րդ հոդված հետեւյալ բովանդակությամբ՝

«ՀՈԴՎԱԾ $47^{7}$. ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԳՈՎԱԶԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

Հատուկ նշանակության սննդամթերքի գովազդը առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցման՝

առաջացնում է տուգանքի նշանակում գովազդատուի նկատմամբ յուրաքանչյուր սննդատեսակի համար սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկից մինչեւ երկուհարյուրապատիկի չափով:

Ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի գովազդը «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1, 3, 4 մասերի պահանջների խախտմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում գովազդատուի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկից մինչեւ երեքհարյուրհիսունապատիկի չափով:

Ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի գովազդը «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2, $5\text{-}5^{3}$ մասերի պահանջների խախտմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում գովազդատուի նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկից մինչեւ երեքհարյուրհիսունապատիկի չափով:

Սույն հոդվածով նախատեսված արարքները կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

2) $244^{14}$ -րդ հոդվածում «45-$47^{4}$ » թվերից հետո լրացնել «եւ $47^{7}$ » բառերը:

*ՀՈԴՎԱԾ 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կառավարություն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

24 մարտի 2011 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 964 - Լ

Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

## Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

*ՀՈԴՎԱԾ 1.* Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 138-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետևյալ կետերով՝

«6) կատարվել է իրի կնոջ նկատմամբ,

7) կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով,

8) կատարվել է ուղղիչ հիմնարկում, կալանավորվածներին կամ ծերբակալվածներին պահելու վայրերում, զորամասում, բուժհաստատություններում՝ տուժողի կախվածությունն օգտագործելով:»․

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է՝

1) երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից կամ այն անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության եւ /կամ/ խնամքի պարտականություն,

2) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

*ՀՈԴՎԱԾ 2.* Օրենսգրքի 139-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Սեքսուալ բնույթի՝ այդ թվում համասեռական գործողությունները տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով՝»․

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ կետերով՝

«6) կատարվել է իրի կնոջ նկատմամբ,

7) կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ կամ դա գործադրելու սպառնալիքով,

8) կատարվել է ուղղիչ հիմնարկում, կալանավորվածներին կամ ծերբակալվածներին պահելու վայրերում, զորամասում, բուժհաստատություններում? տուժողի կախվածությունն օգտագործելով»«

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է՝

1) երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից կամ այն անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության եւ /կամ/ խնամքի պարտականություն,

2) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

*ՀՈԴՎԱԾ 3.* Օրենսգրքի 140-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«*Հոդված 140.* Սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը

1. Անձին սեքսուալ բնույթի՝ այդ թվում համասեռական գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք կատարվել են՝

1) անչափահասի նկատմամբ,

2) երկու կամ ավելի անձանց նկատմամբ կամ միեւնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար,

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունները, որոնք կատարվել են՝

1) երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից կամ այն անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության եւ /կամ/ խնամքի պարտականություն,

2) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ,

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

*ՀՈԴՎԱԾ 4.* Օրենսգրքի 141-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«*Հոդված 141.* Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի հետ

1. Տասնութ տարին լրացած անձի կողմից սեքսուալ բնույթի գործողություններ կատարելն ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ՝ սույն օրենսգրքի 138-րդ կամ 139-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշների բացակայության դեպքում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք կատարվել են՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ կամ միեւնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ,

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունները, որոնք կատարվել են՝

1) երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից կամ այն անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության եւ /կամ/ խնամքի պարտականություն,

2) տասներկու տարին չլրացած անձի նկատմամբ,

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

*ՀՈԴՎԱԾ 5.* Օրենսգրքի 142-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝



«*Հոդված 142.* Անառակաբարո գործողությունները

1. Տասնութ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելը՝ սույն օրենսգրքի 138-141-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշների բացակայության դեպքում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք կատարվել են՝

1) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

2) երկու կամ ավելի անձանց նկատմամբ կամ միեւնույն անձի նկատմամբ՝ պարբերաբար

3) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

4) տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունները, որոնք կատարվել են՝

1) երեխայի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողների կողմից կամ այն անձի կողմից, ում վրա դրված է նրա դաստիարակության եւ /կամ/ խնամքի պարտականություն,

2) տասներկու տարին չլրացած անձի նկատմամբ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»:

*ՀՈԴՎԱԾ 6.* Օրենսգրքի 75-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ, նոր՝ 7-րդ մասով՝

«7. Սեռական անձեռնմխելիության եւ սեռական ազատության դեմ ուղղված՝ սույն օրենսգրքի 138-142-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետը սկսվում է կիրառվել այդ հանցագործությունների անչափահաս տուժողի /տուժողների/ տասնութամյակը լրանալու պահից:»:

*ՀՈԴՎԱԾ 7.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ած պատգամավոր

Վ Դալլաքյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

---

### «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

26 մայիսի 2011 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1040 - Լ

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

*Հոդված1.* «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27 թիվ ՀՕ-193-Ն օրենքի /այսուհետ՝ օրենք/ 2-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ հետեւյալ բովանդակությամբ՝

«Դասիչ՝ նիշավորում ըստ սննդային հավելումների կոդավորման միջազգային թվային համակարգի»:

*Հոդված 2.* Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասում՝

1) «բ» ենթակետից հետո լրացնել «$բ^1$ » նոր ենթակետ հետեւյալ բովանդակությամբ՝

«Կաթի եւ կաթնամթերքի դեպքում՝ տեղեկատվություն պարենային հումքի մշակման ենթարկված լինելու վերաբերյալ»:

2) «գ» ենթակետը լրացնել «եւ դասիչները» բառերով:

*Հոդված 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուներորդ օրը:

ԱԺ պատգամավորներ

Խ. Հարությունյան
Հ. Բիշարյան
Ի. Խաչատրյան
Հ. Մարգարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ է.

Ընդունել «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

14 սեպտեմբերի 2011 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1071 - Լ

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետեւյալ բովանդակությամբ.

«մինչեւ 5000 քառակուսի մետր ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների եւ ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման համար օգտագործվող հողամասերի կադաստրային արժեքների տարբերության վճարում չի կատարվում, եւ կառուցապատում իրականացնելիս համապատասխան չափի հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ համայնքի ղեկավարի կողմից որոշում ընդունելուց եւ շինարարության թույլտվություն տալուց հետո, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում եւ ամենամյա հողային հաշվեկշիռներում: »:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ պատգամավորներ
Գ. Սահակյան
Վ. Այվազյան
Հ. Բիշարյան
Գ. Ենոքյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

### «ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

3 հոկտեմբերի 2011 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1083 - Լ

Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

## «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին

*Հոդված 1.* «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի մայիսի 23-ի N ՀՕ-83-Ն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասում ««դ», «ե»» բառերից հետո լրացնել «եւ 9 հոդվածի 2-րդ մասի «ա»» բառերը:

*Հոդված 2.* Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «ա» կետից հանել «եւ դրանց նկատմամբ կիրառվող պահանջներին: Այս դեպքում ներմուծողը թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը (խմբաքանակը) մաքսային հսկողության ներքո ներկայացնում է հարգորոշման եւ հարգադրոշման լիցենզիա ունեցող անձանց՝ հարգորոշման նպատակով: Վերջիններս ներկայացված իրերը (խմբաքանակը) հարգորոշելուց հետո դրանց վրա դրոշմում են իրենց տարբերանիշը, որի համար տալիս են համապատասխան տեղեկանք» բառերը:

2) 4-րդ մասում «լիցենզիա ունեցող անձինք» բառերից հետո լրացնել «, բացառությամբ այլ երկրներից ներկրվող թանկարժեք մետաղների ջարդոններ եւ թանկարժեք մետաղներից պատրաստված նախապատրաստվածքներ ներմուծելիս, որոնք ունեն այդ իրերի հարգը հավաստող տեղեկանք»:

*Հոդված 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող 10-րդ օրը:

ՀՀ կառավարություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

# ՈՐՈՇՈՒՄԸ

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

3 հոկտեմբերի 2011 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1084 - Լ

Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

*Հոդված 1.* «Առեւտրի եւ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-134-Ն օրենքի՝ (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածում՝

1. «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առեւտրի կետ» հասկացությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված վայրերում՝ քաղաքաշինական եւ տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման մշտական (ստացիոնար) կայան.»

2. «բացօթյա առեւտուր» հասկացության «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի» բառերով:

3. «առեւտրի կենտրոն» հասկացությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«առեւտրի կենտրոն՝ առեւտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից որպես մեկ ամբողջություն տիրապետվող եւ կառավարվող՝ մեկ ամբողջական շենքում կամ իրար հետ մշտական (ստացիոնար) անցուղիներով կապված շենքային համալիրում տեղաբաշխված՝ առեւտրի, հանրային սննդի եւ զվարճանքի օբյեկտների համախումբ, որտեղ նախատեսված են նաեւ այլ ծառայությունների համար տարածքներ:»:

4. լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր հասկացություններով՝

«առեւտրի իրականացման վայր՝ առեւտրի իրականացման վայրի կազմակերպչի կողմից որպես մեկ ամբողջություն տիրապետվող եւ կառավարվող՝ առանձնացված, կառուցապատված եւ կահավորված, երկու եւ ավելի վաճառատեղ ունեցող տարածք, որտեղ կարող են նախատեսվել նաեւ հանրային սննդի եւ այլ ծառայությունների համար տարածքներ.»:

առեւտրի իրականացման վայրի վաճառատեղ՝ առուվաճառքի պայմանագրով գործարքներ կատարելու համար օգտագործվող տեղ.

խանութ՝ առեւտրական գործունեության իրականացման համար նախատեսված՝ հատուկ սարքավորված շենք, շինություն կամ դրա մաս, որն ունի առեւտրական դահլիճ.

կրպակ՝ առեւտրական գործունեության իրականացման համար նախատեսված շինություն, որը չունի առեւտրական դահլիճ.

Վաճառատեղ (վաճառասեղան)՝- սույն օրենքի իմաստով առեւտրի իրականացման վայրում առեւտուր իրականացնելու համար մեկ եւ ավելի վաճառողներին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված զույք (սեղան):

*Հոդված 2.* Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1.Առեւտրի օբյեկտների տեսակներն են՝ խանութները, կրպակները, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերը:»:

*Հոդված 3.* Օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի» բառերով:

*Հոդված 4.* Օրենքի 9-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում «տաղավարներում, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի» բառերով:

2. 15-րդ մասի «ա» կետում «առանձնացված տաղավարներում եւ կրպակներում» բառերը փոխարինել «առանձնացված կրպակներում» բառերով:

3. 17-րդ մասում «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի» բառերով:

4. 18-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«18. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերից դուրս հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքն արգելվում է, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի:»:

*Հոդված 5.* Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» եւ «բ» կետերում «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի» բառերով:

*Հոդված 6.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՀՀ կառավարություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին

*Հոդված 1.* Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 158-րդ հոդվածի՝

1.20-րդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերից դուրս, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ վաճառք իրականացնելը՝

Առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչեւ հարյուրապատիկի չափով:»:

2. 23-րդ մասում «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի» բառերով:

*Հոդված 2.* Օրենսգրքի 169.16-րդ հոդվածում՝

1. 4-րդ մասի 1-ին պարբերությունը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«Առանց թույլտվության հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում հեղուկ վառելիքի եւ/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի եւ տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը՝»:

2. 4-րդ մասից հետո լրացնել նոր մաս հետեւյալ բովանդակությամբ՝

«Առանց թույլտվության համայնքի տարածքում՝ բացառությամբ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերի՝ տեխնիկական հեղուկների վաճառք իրականացնելը՝

Առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչեւ երեսնապատիկի չափով:»:

*Հոդված 3.* Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի 2-րդ մասում «եւ 21-րդ մասերի» բառերը փոխարինել «,21-րդ, 26-րդ եւ 27-րդ մասերի» բառերով:

*Հոդված 4.* Օրենսգրքի 244.7-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխություններն ու լրացումները.

1. Հոդվածի վերնագրում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ» բառերը փոխարինել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ» բառերով:

2. 1-ին մասում՝

1)«Հայաստանի Հանրապետության առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարության Հայաստանի Հանրապետության որակի տեսչությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության շուկայի եւ սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությունը» բառերով:

2)«քսաներեքերորդ» բառը հանել:

3.Նույն հոդվածում ավելացնել նոր 3-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության համապատասխան մարմինները քննում են սույն օրենսգրքի 158-րդ հոդվածի 26-րդ եւ 27-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:»

Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված գործերով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու եւ վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի (ունեն) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարը կամ նրա լիազորած պաշտոնատար անձը (անձիք):»:

*Հոդված 5.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը, իսկ սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից»:

ՀՀ կառավարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

## «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին

*Հոդված 1.* «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության (2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337) օրենքի 40-րդ հոդվածում՝

1. 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն»:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «9-րդ» մաս.

«9) տալիս է համայնքի տարածքում առևտրի օբյեկտներում, բացառությամբ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերի, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն»:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը, իսկ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից»:

<< կառավարություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

## «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

*Հոդված 1.* «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության (1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-185) օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածում՝

1. ժ. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժա) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար».

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ժբ» կետով.

«ժբ) համայնքի տարածքում առևտրի օբյեկտներում, բացառությամբ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերի, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար»:

*Հոդված 2.* Օրենքի 10-րդ հոդվածի՝

1. 5-րդ մասում՝

1) ք. կետում «հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի» բառերը փոխարինել «հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «զ»,«դ» և «ե» կետերով.

ա. «զ) համայնքի տարածքում առևտրի օբյեկտներում, բացառությամբ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերի, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000 -60 000 դրամ:»:

բ. «դ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում հեղուկ վառելիքի եւ/կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի եւ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000-100000 դրամ:»:

գ. «ե) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերում առեւտրի օբյեկտներում, բացառությամբ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերի, տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000-20000 դրամ:»:

*Հոդված 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը, իսկ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետը՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող տարվա հունվարի 1-ից»:

ՀՀ կառավարություն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

### «ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

3 հոկտեմբերի 2011 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1089 - Լ

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին

*ՀՈԴՎԱԾ 1.* «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-103 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր ժա ) կետով.

«ժա) սահմանում է կալանավորված անձանց եւ դատապարտյալների ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կամավոր նախաթեստային եւ հետթեստային խորհրդատվության եւ հետազոտության իրականացման կարգը:»

*ՀՈԴՎԱԾ 2.* Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի վերջում լրացնել «բացառությամբ 2-րդ մասի դ) կետի » բառերը:

*ՀՈԴՎԱԾ 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կառավարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

## «ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Սպառողական կոոպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

24 հոկտեմբերի 2011 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1105 - Լ

Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

## «Սպառողական կոոպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

*Հոդված 1.* Սպառողական կոոպերացիայի մասին» Հայաստանի Հանրապետության 1993 թվականի դեկտեմբերի 30-ի ՀՕ-91 օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «30»-ից ոչ պակաս» բառերը»:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կառավարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

---

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՆԻԿՈՅԱՆ

6 փետրվարի 2012 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1183 - Լ

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 2007թ. նոյեմբերի 28-ի վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ած պատգամավորներ
Գ.Սահակյան
Ռ.Պետրոսյան
Վ.Բոստանջյան
Հ. Մարգարյան
Ա.Սաֆարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

# «ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՆԻԿՈՅԱՆ

6 փետրվարի 2012 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1184 - Լ

Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան*

1. Սույն օրենքը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակույթի եւ հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները եւ կարգավորում է դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները:

*Հոդված 2. Սույն օրենքի նպատակն ու խնդիրները*

1. Սույն օրենքի նպատակն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը, կանանց եւ տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձեւավորման աջակցումը եւ հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը:

2. Սույն օրենքի խնդիրներն են՝ ապահովել կանանց եւ տղամարդկանց.

1) իրավունքների, պարտականությունների եւ պատասխանատվության իրական հավասարությունը, նրանց նկատմամբ հավասար վերաբերմունքը եւ խտրականության բացառումը,

2 ) հնարավորությունների հավասարությունը,

3) արդյունքի հավասարությունը:

*Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հասկացությունները*

1. Սույն հոդվածում սահմանված հասկացությունները սույն օրենքում ունեն հետեւյալ համապատասխան իմաստները.

1) Գենդեր, գենդերային՝ տարբեր սեռի անձանց՝ ծնողբերովի, սոցիալապես ամրագրված վարք, կանանց եւ տղամարդկանց միջեւ հարաբերությունների սոցիալական հայեցակետ, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը:

2) Գենդերային խտրականություն (ուղղակի, անուղղակի)՝ սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակույթի եւ հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց եւ տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

3) Ուղղակի գենդերային խտրականություն՝ սեռային պատկանելիությունն ուղղակիորեն մատնանշող խտրականություն:

4) Անուղղակի գենդերային խտրականություն՝ խտրականություն առանց սեռական պատկանելության ուղղակի մատնանշման:

5) Գենդերային հավասարության քաղաքականություն՝ պետական, հասարակական նպատակային գործունեություն՝ ուղղված հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց եւ տղամարդկանց իրական հավասարության ապահովմանը:

6) Գենդերային վիճակագրություն՝ սեռային բաշխմամբ վիճակագրություն, որն արտացոլում է սոցիալ-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց եւ տղամարդկանց համապատասխան դիրքը եւ հասարակության մեջ առկա գենդերային հիմնախնդիրներն ու հարաբերությունները:

7) Գենդերային փորձաքննություն՝ ներպետական իրավական համակարգի մշտադիտարկում եւ հանրային-իրավական վերլուծություն, ինչպես նաեւ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում՝ կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների, հավասար հնարավորությունների, պարտականությունների, պատասխանատվության, գործընկերային հարաբերությունների եւ հավասար արդյունքի ապահովման եւ գենդերային խտրականության բացառման առումով:

8) Գենդերային ներկայացվածություն՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կամ որեւէ կազմակերպության կազմում կանանց եւ տղամարդկանց ներկայացվածության համամասնություն:

9) Գենդերային հավասարություն՝ կանանց եւ տղամարդկանց հավասար իրավական կարգավիճակ եւ դրա իրականացման համար հավասար հնարավորություններ, որոնք հնարավորություն են ընձեռում անձանց, անկախ սեռից, ազատորեն օգտագործելու իրենց ունակությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակույթի եւ հասարակական կյանքի այլ ոլորտներում մասնակցություն ունենալու համար:

10) Գենդերային իրավահավասարություն՝ օրենքի առաջ կանանց եւ տղամարդկանց իրավունքների, պարտականությունների եւ պատասխանատվության հավասարություն՝ օրենքով սահմանված բացառությունների հաշվառմամբ:

11) Գենդերային չափորոշիչներ (գենդերային զգայուն ինդիկատորներ)՝ դրանք ցուցիչներ կամ չափիչներ են, որոնք քանակական եւ որակական

ցուցանիշները կիրառում են որոշակի ժամանակահատվածում հասարակությունում գենդերային նշանակություն ունեցող փոփոխությունները հանրագումարի բերելու համար:

12) Գենդերային հարաբերություններ՝ շփման մեջ կամ տարբեր տեսակի համատեղ գործունեության իրականացման ընթացքում կանանց եւ տղամարդկանց գենդերային բնույթի վարք եւ վարմունք:

13) Գենդերային կարծրատիպեր՝ կանանց եւ տղամարդկանց միջեւ տարբերությունների մասին տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ առկա կարծրացած պատկերացումներ:

14) Գենդերային վերլուծություն՝ հասարակության մեջ կանանց եւ տղամարդկանց դրության վրա՝ հասարակական կյանքի համապատասխան ոլորտներում գործող կամ նախաձեռնվող ծրագրերի, իրավական ակտերի, պետական քաղաքականության տարբեր ներգործությունների գնահատման գործընթաց:

15) Գենդերային քվոտաներ (քվոտավորում)՝ հասարակական կյանքի համապատասխան ոլորտներում օրենքով սահմանված հարաբերակցությամբ կանանց եւ տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությունն ապահովող ժամանակավոր հատուկ միջոցների տեսակ, որը կարող է վերացվել հասարակական կյանքի համապատասխան ոլորտում կանանց եւ տղամարդկանց զուգակշռված/ հավասարակշռված/ հաշվեկշռված ներկայացվածության հասնելուն համապատասխան:

16) Համալիր մոտեցում գենդերային հավասարության հիմնախնդրին (մեյնսթրիմինգ) ռազմավարություն, որի միջոցով կանանց եւ տղամարդկանց շահերը դառնում են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակույթի կամ հասարակական կյանքի այլ ոլորտներում իրավական ակտերի, քաղաքականության, ծրագրերի եւ միջոցառումների մշակման, կատարման, մշտադիտարկման եւ գնահատման գործընթացի անքակտելի բաղադրիչը, որն ուղղված է կանանց եւ տղամարդկանց միջեւ անհավասարության վերացմանը:

17) Հավասար հնարավորություններ՝ իրական գենդերային իրավահավասարության հասնելու համար անհրաժեշտ միջոցների եւ պայմանների համակարգ:

18) Արդյունքի հավասարություն՝ հավասարության հայեցակարգ, որին համապատասխան ճանաչվում է, որ կանանց եւ տղամարդկանց կողմից հավասար (միեւնույն) արդյունքների հասնելու համար նրանց նկատմամբ անհրաժեշտ է դրսեւորել տարբեր վերաբերմունք, քանի որ նրանց կենսապայմանները տարբեր են, կամ այն բանի համար, որ փոխհատուցվի անցյալում կանանց նկատմամբ իրագործված խտրականությունը:

19) Գործընկերային հարաբերություններ հավասար պայմաններում կանանց եւ տղամարդկանց համագործակցություն կամ համատեղ մասնակցություն պետական եւ հասարակական կյանքին:

20) Ժամանակավոր հատուկ միջոցներ՝ իրավական, կազմակերպական բնույթի ժամանակավոր միջոցներ ուղղված հասարակական կյանքի՝ գենդերային



կարծրատիպերով եւ գենդերային մշակույթի բացակայությամբ առավել աչքի ընկնող ոլորտներում սեռերից մեկի ներկայացուցիչների պաշտպանությանը:

21) Սեռական ոտնձգություն՝ գենդերային խտրականության դրսեւորումներից տեսակ՝ խոսքային կամ ֆիզիկական դրսեւորում ունեցող սեռական բնույթի գործողություններ կամ ցանկացած իրավիճակ, որոնք ուղղված են անձի արժանապատվությունը նվաստացնելուն, վախեցնելուն, թշնամությանը, ստորացմանը կամ նմանատիպ իրավիճակներին:

*Հոդված 4. Գենդերային հավասարության քաղաքականության հիմնական սկզբունքները*

1. Գենդերային հավասարության քաղաքականության սկզբունքներն են.

1) գենդերային հավասարության ապահովման ոլորտում միջազգային իրավունքի նորմերի պահպանումը,

2) օրինականությունը,

3) սոցիալական արդարությունը,

4) գենդերային խտրականության բացառումը,

5) թափանցիկությունը,

6) գենդերային հավասարության առաջընթացին քաղաքացիական հասարակության մասնակցությունը:

*Հոդված 5. Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գենդերային հարաբերությունների կարգավորման ոլորտում*

1. Գենդերային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, գենդերային հարաբերություններ կարգավորող իրավական նորմեր պարունակող Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով:

2.Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով եւ այլ օրենքներով, որոնք պարունակում են գենդերային հարաբերությունները կարգավորող նորմեր, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

*Հոդված 6. Գենդերային խտրականության արգելումը*

1. Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ուղղակի եւ անուղղակի գենդերային խտրականությունն արգելվում է:

2. Գենդերային ուղղակի խտրականության ձեւեր են՝

1) ընտանեկան դրության, հղիության եւ ընտանեկան պարտականությունների կատարման հիմքով խտրականությունը,

2) միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրությունը, աշխատանքի վարձատրության ցանկացած փոփոխությունը (բարձրացում կամ իջեցում) կամ աշխատանքի պայմանների վատթարացումը սեռի հատկանիշով,

3) սեռական ոտնձգությունը,

4) երբ անձը սեռի հատկանիշով ենթարկվել, ենթարկվում կամ կարող է ենթարկվել առավել վատ կամ անբարենպաստ վերաբերմունքի միևնույն կամ նմանատիպ իրավիճակում:

3. Գենդերային անուղղակի խտրականության ձևեր են՝

1) գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվությամբ, կրթության և մշակույթի միջոցով,

2) այնպիսի պայմանների հաստատումը, պահանջների ներկայացումը, որոնք առաջացրել են կամ կարող են առաջացնել բացասական հետևանքներ՝ որոշակի սեռի անձանց վնաս պատճառելու ձևով:

4. Գենդերային խտրականություն չէ՝

1) կանանց և տղամարդկանց հարաբերությունների կարգավորման հարցերում տարբերությունների սահմանումը՝ պայմանավորված հղիության և ծննդաբերության, երեխայի խնամքի և կրծքով կերակրելու հետ,

2) օրենքով սահմանված դեպքերում բացառապես տղամարդկանց պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության անցնելը,

3) սույն օրենքի հիմքով ժամանակավոր հատուկ միջոցների կիրառումը, որոնք ուղղված են իրավական կարգավորման ենթակա քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակույթի և այլ հարաբերություններում գենդերային հավասարության հաստատմանը,

4) կանանց և տղամարդկանց աշխատանքի պահպանման առանձնահատկությունները՝ կապված նրանց վերարտադրողական առողջության պահպանման հետ,

5) մասնագիտական որակավորմանը ներկայացվող պահանջների սահմանումը՝ հիմնված պարտականությունների՝ միայն որոշակի սեռի անձանց կատարման հնարավորության վրա,

6) այն տարբերությունների սահմանումը, որը պայմանավորված է տարբեր սեռերի կենսաբանական առանձնահատկությամբ,

7) Կրոնական կանոնական ծեսերը:

5. Արգելվում է անձի վերաբերյալ սեռի հատկանիշով պայմանավորված վիրավորական և նվաստացուցիչ հրապարակային հայտարարություն անելը, ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:



ԳԼՈՒԽ II

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

***Հոդված 7. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունը***

1. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունը ձևավորվում և իրականացվում է սույն օրենքով սահմանված սկզբունքներին համապատասխան՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց կողմից:

2. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության ձևավորմանը և իրագործմանը մասնակցում են իրենց նախաձեռնությամբ:

***Հոդված 8. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները***

1. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) գենդերային հավասարության հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը,

2) գենդերային հավասարության ապահովման համար նորմատիվ իրավական բազայի ձևավորումը, կատարելագործումը, զարգացումը և միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխանեցումը,

3) գենդերային հավասարության ապահովման համար գործուն իրավական և կազմակերպական մեխանիզմների ստեղծումը,

4) գենդերային հավասարության հասնելուն ուղղված պետական նպատակային ծրագրերի և միջոցառումների մշակումն ու իրագործումը և դրանց ֆինանսավորումը,

5) կանանց և տղամարդկանց հնարավորությունների միջև անհավասարության վերացմանը միտված ժամանակավոր հատուկ միջոցների կիրառումը,

6) գենդերային վիճակագրության և գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման մշտադիտարկման իրականացումը,

7) գենդերային հավասարության խախտմանն ուղղված տեղեկատվությունից, քարոզչությունից հասարակության պաշտպանությունը,

8) գենդերային հավասարության մշակույթի ձևավորումը և քարոզչությունը:

*Հոդված 9. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման մշտադիտարկումը*

1. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման մշտադիտարկումն ու գնահատումն իրականացվում է պետական կառավարման մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

2. Պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները գենդերային հավասարության ուղղությամբ իրենց կողմից իրականացված գործունեության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով ամենամյա տեղեկատվություն են ներկայացնում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին (այսուհետ՝ պետական լիազոր մարմին) եւ կարող են դրանք հրապարակել զանգվածային լրատվության միջոցներով:

*Հոդված 10. Գենդերային վիճակագրությունը*

Հայաստանի Հանրապետությունում գենդերային վիճակագրությունն իրականացվում է պետական վիճակագրության հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքներին համապատասխան:

ԳԼՈՒԽ III

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Հոդված 11. Գենդերային հավասարության երաշխիքները պետության կառավարման մեջ*

1. Պետությունն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով լիազորված մարմինների եւ պաշտոնատար անձանց, իրավական, կազմակերպական եւ այլ մեխանիզմների միջոցով կանանց եւ տղամարդկանց համար երաշխավորում եւ ստեղծում է պետության կառավարմանը մասնակցելու համար հավասար հնարավորություններ:

2. Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ օրենքներով սահմանված իրենց իրավասության սահմաններում խորհրդակցական, աշխատանքային մարմիններ, պատվիրակություններ, ընտրական հանձնաժողովներ, օրենքով սահմանված դեպքերում, քվոտաներով եւ կոլեգիալության սկզբունքով այլ մարմիններ կազմավորելիս կամ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններում նշանակում կատարելիս կամ քաղաքական, հայեցողական, քաղաքացիական պաշտոններում նշանակվելու համար թեկնածություններ առաջարկելիս առաջնորդվում են գենդերային հավասարության սկզբունքով:



*Հոդված 12. Հավասար ընտրական իրավունքների երաշխիքները*

1. Կանայք եւ տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ եւ հավասար հնարավորություններ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին մասնակցելիս:

2. Ընտրություններ անցկացնելիս կանայք եւ տղամարդիկ հավասարապես ապահովվում են արդարացի եւ իրական հնարավորություններով՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններ ընտրելու եւ ընտրվելու իրավունքն իրականացնելու համար:

3. Կանանց եւ տղամարդկանց հավասարակշռված/ հաշվեկշռված ներկայացվածության հասնելու նպատակով պետությունը կարող է սահմանել ընտրովի մարմիններում առավել քիչ ներկայացված սեռի թեկնածուների աջակցմանն ուղղված ժամանակավոր հատուկ միջոցներ:

4. Ընտրություններին կուսակցությունների մասնակցությունը պետք է ապահովված լինի թեկնածուների ընտրական ցուցակներում գենդերային ներկայացվածությամբ՝ օրենքով սահմանված քվոտաներով:

5. Կանանց եւ տղամարդկանց ընտրական իրավունքները, դրանց երաշխիքները, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման, մասնակցության, ինչպես նաեւ կուսակցությունների կողմից գենդերային ներկայացվածության ապահովումը խրախուսելու եւ աջակցելու միջոցառումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:

*Հոդված 13. Գենդերային հավասարության երաշխիքները հանրային ծառայության մեջ*

1. Կանայք եւ տղամարդիկ հանրային ծառայության ընդունվելու եւ մասնագիտական գործունեություն իրականացնելու համար ունեն հավասար իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն եւ հավասար հնարավորություններ:

2. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են ապահովել կանանց եւ տղամարդկանց՝ հանրային ծառայության ընդունվելու հավասար հնարավորություններ՝ իրենց ընդունակություններին եւ մասնագիտական պատրաստվածությանը համապատասխան:

3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերում աշխատողներին պաշտոններում նշանակելիս առաջնորդվում են գենդերային հավասարության սկզբունքով:

4. Հանրային այն ծառայողները, ովքեր սեռային պատկանելության հիմքով օրենքով սահմանված ժամկետում չեն ենթարկվում աշխատանքային առաջխաղացման կամ մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով չեն գործուղվում վերապատրաստման, ուսուցման, իրավունք ունեն իրավասու պաշտոնատար անձից պահանջելու եւ ստանալու նման գործողությունների պատճառների գրավոր հիմնավորումները, ինչպես նաեւ պահանջելու տեղեկություններ այն անձի փորձի եւ

որակավորման մասին, որը նշանակվել է (ընդունվել, առաջ է քաշվել) իրենց հավակնած պաշտոնին կամ գործուղվել է վերապատրաստման, ուսուցման:

5. Կանայք եւ տղամարդիկ հանրային ծառայության թափուր պաշտոնների համալրմանը իրավունք ունեն մասնակցելու օրենքով սահմանված կարգով՝ հավասարապես եւ հավասար պայմաններում:

6. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները պարտավոր են մշակել եւ իրականացնել աշխատողների աշխատանքային առաջխաղացման քաղաքականություն՝ գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության հաշվառմամբ:

7. Արգելվում է միայն մեկ սեռի անձանց համար հանրային ծառայության ընդունվելու մրցույթներ հայտարարելը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա ուղղակիորեն բխում է այլ անձանց իրավունքների եւ շահերի պաշտպանությունից:

8. Սույն հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ ընդունված ակտը կամ թափուր պաշտոնների համալրման համար անցկացված մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով:

## ԳԼՈՒԽ IV

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

*Հոդված 14. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից*

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր լիազորությունների սահմաններում՝

1) իրագործում է գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունը,

2) ապահովում է գենդերային հավասարության ապահովման քաղաքականության իրագործման ոլորտում պետական կառավարման (հանրապետական եւ տարածքային) եւ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերահսկողությունը,

3) մինչեւ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի վերջը հաղորդում է ներկայացնում նախորդող տարում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման արդյունքների եւ Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության ոլորտում ստեղծված իրավիճակի վերաբերյալ, որը հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով:

4) Միավորված ազգերի կազմակերպության «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) սահմանված կարգով եւ ժամկետներում Գլխավոր քարտուղարին է ներկայացնում Կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ զեկույցը.



5) հաստատում է գենդերային հավասարության վրա պետական քաղաքականության, ծրագրերի եւ միջոցառումների ազդեցության գնահատման կարգը,

6) ստեղծում է իրավական եւ կազմակերպական գործուն մեխանիզմներ գենդերային հավասարության պետական քաղաքականության ապահովման եւ իրագործման համար,

*Հոդված 15. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործումը պետական լիազոր մարմնի կողմից*

1. Գենդերային քաղաքականության ոլորտում պետական լիազոր մարմինը.

1) մշակում եւ իրականացնում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովման միասնական պետական քաղաքականությունը,

2) ներկայացնում է առաջարկություններ գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի եւ միջոցառումների ֆինանսավորումը նախատեսելու վերաբերյալ,

3) համակարգում է Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ուղղությամբ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող աշխատանքները,

4) ուսումնասիրում եւ ամփոփում է գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման վերաբերյալ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացրած ամենամյա տեղեկատվությունը, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներկայացրած մշտադիտարկման արդյունքները, եւ մինչեւ հաջորդ տարվա մարտի 1-ը, Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում տեղեկատվություն ամփոփման արդյունքների վերաբերյալ,

5) կազմակերպում է գենդերային հավասարության ոլորտում տեղեկատվական, քարոզչական աշխատանքներ եւ «Գենդերային գիտելիքների հիմունքների վերաբերյալ » թեմայով վերապատրաստման դասընթացներ:

*Հոդված 16. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից*

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակում միջոցառումներ են ձեռնարկում գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ուղղությամբ:

*Հոդված 17. Քաղաքացիական հասարակության աջակցությունը գենդերային հավասարության ապահովմանը*

1. Քաղաքացիական հասարակության անդամներն իրավունք ունեն՝

1) մասնակցել գենդերային հավասարության ապահովման պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած որոշումների, ծրագրերի եւ միջոցառումների մշակմանը եւ իրագործմանը,

2) վեր հանել գենդերային հավասարության խախտման փաստերը եւ գենդերային քաղաքականության ոլորտում պետական լիազոր մարմնին ներկայացնել տվյալներ՝ գենդերային հավասարության ապահովման ոլորտում մշտադիտարկում իրականացնելու նպատակով,

3) իրականացնել սույն օրենքի եւ գենդերային հավասարության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման մշտադիտարկումը,

4) իրականացնել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի եւ գործող նորմատիվ իրավական ակտերի անկախ գենդերային փորձաքննություն, գենդերային վերլուծություն եւ այդ առնչությամբ համապատասխան եզրակացություն, առաջարկություն կամ օրենքների եւ այլ իրավական ակտերի նախագծեր մշակել եւ ներկայացնել իրավասու մարմիններ,

5) նախապատրաստել գենդերային հավասարության ապահովման ոլորտի վերաբերյալ այլընտրանքային հրապարակային զեկույցներ, հաղորդումներ,

6) զանգվածային լրատվության միջոցներով իրականացնել գենդերային հավասարության ապահովմանը միտված քարոզչություն,

7) իրականացնել գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության աջակցմանն ուղղված օրինական այլ գործողություններ:

2. Զանգվածային լրատվության միջոցներն աջակցում են գենդերային հավասարության առաջընթացին՝ իրենց ծրագրերով, թողարկումներով գենդերային հավասարությանը վերաբերող տեղեկատվության տարածմամբ:

*Հոդված 18. Նորմատիվ իրավական ակտերի գենդերային փորձաքննությունը*

1. Նորմատիվ իրավական ակտերի սոցիալական ոլորտի փորձաքննությունը ներառում է նաեւ գենդերային փորձաքննությունը:

2. Գենդերային փորձաքննությունն իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման, նորմատիվ իրավական ակտերում եւ դրանց նախագծերում գենդերային հավասարության խախտումների փաստերը բացառելու եւ վերացնելու նպատակով, Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը գենդերային հավասարության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին եւ միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխանեցնելու, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակույթի եւ հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց եւ տղամարդկանց համար հավասար իրավունքներ եւ հավասար հնարավորություններ ապահովելու սկզբունքը պահպանելու, կանանց եւ տղամարդկանց սեռի հատկանիշով խտրականությունից պաշտպանելու համար:

3. Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի նախագծերի գենդերային փորձաքննությունն իրականացնում պետական լիազոր մարմինը:



## ԳԼՈՒԽ V

## ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

*Հոդված 19. Գենդերային հավասարության խախտման վերաբերյալ բողոքները եւ խախտման արդյունքում տուժած անձանց իրավունքների պաշտպանությունը*

1. Այն անձը, ով գտնում է, որ իր նկատմամբ կիրառվել է գենդերային խտրականություն, իրավունք ունի իր իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու եւ խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար դիմել իրավասու պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց եւ օրենքով սահմանված ժամկետում ստանալ պատասխան:

2. Սույն հոդվածի 1-ին մասի հիմքով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց գենդերային հավասարության խախտման փաստով դիմելը չի սահմանափակում անձի՝ դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալը:

3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձեւից) եւ դրանց պաշտոնատար անձանց գործողությունները կամ անգործությունը, որոնք հանգեցրել են գենդերային խտրականության, կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

4. Գենդերային հավասարության խախտման արդյունքում տուժած անձանց իրավունքների պաշտպանությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով:

*Հոդված 20. Պատասխանատվությունը սույն օրենքի խախտման համար*

1. Սույն օրենքը խախտելու համար մեղավոր անձինք օրենքով սահմանված դեպքերում եւ կարգով կրում են կարգապահական, վարչական կամ քրեական պատասխանատվություն:

## ԳԼՈՒԽ VI

## ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

*Հոդված 21. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ֆինանսավորումը*

1. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությամբ նախատեսված ծրագրերի եւ միջոցառումների ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

2. Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությամբ նախատեսված ծրագրերի եւ միջոցառումների իրականացման համար կարող են կատարվել նաեւ օրենքով չարգելված այլ

աղբյուրներից հատկացումներ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաեւ այլ կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձեւից) եւ ֆիզիկական անձանց կողմից հանգամանքություններ, նվիրատվություններ եւ այլ հատկացումներ, որոնք օգտագործվում են բացառապես գենդերային հավասարության ապահովման պետական, տարածքային եւ համայնքային զարգացման ծրագրերի եւ միջոցառումների ֆինանսավորման նպատակով:

## ԳԼՈՒԽ VII

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*Հոդված 22. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը*

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ած պատգամավորներ
Հ.Բիշարյան
Հ.Մարգարյան
ՀՀ կառավարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

# ՈՐՈՇՈՒՄԸ

---

## «ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՆԻԿՈՅԱՆ

27 փետրվարի 2012 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1210 - Լ

Առաջին ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* «Երկաթուղային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-293-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

*Հոդված 2.* Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 25-րդ կետերում, 14-րդ հոդվածի 3-րդ մասում, 25-րդ հոդվածի 3-րդ և 8-րդ մասերում «երկաթուղիներ» բառը փոխարինել «երկաթուղային գծեր» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

*Հոդված 3.* Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Երկաթուղու օտարման շերտ (այսուհետ՝ օտարման շերտ)՝ երկաթուղային գծի հողապաստառը և դրան հարակից հողամասերը, որոնք նախատեսված են երկաթուղային տրանսպորտի օբյեկտների տեղակայման համար:»:

*Հոդված 4.* Օրենքի 3-րդ հոդված 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 41-րդ, 42-րդ , 43-րդ և 44-րդ կետերով.

«41) երկաթուղային գծի հողապաստառ՝ (այսուհետ՝ հողապաստառ) երկաթուղային գծի համար հիմք ծառայող կառուցվածք, որն իր մեջ ներառում է հողաթումբը կամ փորվածքը, հողաթմբի հիմքի կամ փորվածքի եզրի կողմում առափներ ունեցող ջրահեռացման առուներն ու ապահովիչ շերտերը.

42) երկաթուղային կայարանի փակում՝ գնացքների ընդունման, կամ մեկնման, կամ ուղեւորների փոխադրման, կամ բեռների, ուղեբեռների, կամ բեռնածանրոցների ընդունման, բեռնման, կամ բեռնաթափման հետ կապված բոլոր կամ յուրաքանչյուր գործողության չկատարումը:

43) երկաթուղային գծի փակում՝ երկաթուղային գծով ուղեւորատար կամ բեռնատար գնացքների երթեւեկության դադարեցումը:

44) երկաթուղային գիծ՝ ինժեներական կառույց, որը բաղկացած է ռելսերից, կոճերից, ռելսային ամրացումներից, բալաստային պրիզմայից եւ հողապաստառից ու նախատեսված է երկաթուղային շարժակազմի երթեւեկության համար:

*Հոդված 5.* Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով.

«8) երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպման եւ իրականացման կարգի հաստատում:»:

*Հոդված 6* Օրենքի 20-րդ հոդվածի՝

1. 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի, երկաթուղային կայարանների փակումն եւ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի անցումը ոչ ընդհանուր օգտագործման գծերի՝ իրականացվում է լիազոր մարմնի առաջարկության հիման վրա՝ կառավարության կողմից:

2. 10-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

*Հոդված 7.* Օրենքի 25-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 10-րդ. մասով.

«10. Երկաթուղային տրանսպորտում տրանսպորտային պատահարների եւ երկաթուղային տրանսպորտի շահագործման եւ երթեւեկության անվտանգության կանոնների խախտման հետ կապված միջադեպերի ծառայողական քննության եւ հաշվառման կարգերը սահմանում է լիազոր մարմինը:»:

*Հոդված 8.* Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2.1 գլխով.

«ԳԼՈՒԽ 2.1

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՕՏԱՐՄԱՆ ՇԵՐՏԵՐԻ ՉԱՓԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

*Հոդված 15.1* Երկաթուղու օտարման շերտերի չափերի եւ պաշտպանական գոտիների սահմանման կարգը

1. Օտարման շերտի չափերը սահմանվում են կառավարության կողմից հաստատված նորմերի հիման վրա մշակված ճարտարապետաշինարարական նախագծերով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ մասում նշված հողապաստառի չափերը:

2. Կայարանամիջյան երկաթուղային գծերի տեղակայման համար հատկացվող հողամասի լայնությունը սահմանվում է համաձայն հավելվածի:

3. Հողաթմբի բարձրությունը կամ փորվածքի խորությունը 12,0 մետր գերազանցելու, կամ հողապաստառի լայնական կտրվածքի չափերը համապատասխան շինարարական նորմով սահմանված չափերից տարբերվելու, կամ հողաթումբը բլրաշատ ու լեռնային ռելիեֆի կամ թույլ գրունտների վրա տեղադրվելու դեպքերում հողապաստառի լայնությունը սահմանվում է լիազոր մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնելով քաղաքաշինության բնագավառի կառավարության պետական լիազորված մարմնի հետ:

4. Երկու և ավելի երկաթուղային գծերի տեղակայման դեպքում նախատեսվող հողամասի լայնությունը յուրաքանչյուր հաջորդ երկաթուղային գծի համար սահմանվում է սույն հոդվածի 2-րդ մասում բերված չափերից 4,0 մետր ավելի չափով:

5. Հողապաշտպան երկարությամբ հողաշերտի սահքը պահող հողաամրացուցիչ և այլ տեսակի ծառատնկումներ կատարելու, անտառի եզրից մինչև օտարման շերտի սահմանը բաժանարար շերտ ստեղծելու, կայարանամիջյան երկաթուղային գծերի օտարման շերտերում ծյունապահ անտառատնկումներ կատարելու, փորվածքների լայնական մշակման դեպքում հողակույտերի դիզում կատարելու կամ մշտական ծյունապահ ցանկապատներ տեղադրելու անհրաժեշտության դեպքերում՝ երկաթուղային գծերի տեղակայման համար նախատեսվող օտարման շերտի լայնությունը սահմանվում է լիազոր մարմնի կողմից հաստատված նորմերի պահանջներին համապատասխան:

6. Արհեստական կառույցների (կամրջային անցումների, թունելների) տեղաբաշխման վայրերում օտարման շերտի լայնությունը սահմանվում է ճարտարապետաշինարարական նախագծերով:

7. Երկաթուղու պաշտպանական գոտիները չեն մտնում օտարման շերտի մեջ և նախագծվում են օտարման շերտի նախագծման հետ միաժամանակ:

8. Օտարման շերտի երկայնությամբ տեղաբաշխված հողամասերը (դրանց մասերը) երկաթուղու պաշտպանական գոտիների սահմաններում ընդգրկվում են այն դեպքում, երբ երկաթուղային գծերը անցնում են.

1) ծնահյուսերի, փլուզումների, ողողումների, հեղեղումների, հեղեղատների առաջացման կամ վտանգավոր երկրաբանական ազդեցությունների ենթարկվող վայրերով.

2) պաշտպանիչ անտառատնկվածքների դեր կատարող անտառներով, այդ թվում գետերի ողողահուներում կամ մակերեսային ջրային օբյեկտների երկարությամբ առկա անտառներով.

3) անտառներով, որտեղ ծառերի համատարած հատումը կարող է ազդել սարերի և բլուրների թեքությունների կայունության վրա կամ հանգեցնել փլուզումների, փլվածքների, կամ հեղեղատների առաջացմանը կամ հանգեցնել հեղեղումների և ծնահյուսերի երևան գալուն, կամ ազդել երկաթուղու պահպանվածության, կայունության կամ ամրության վրա:

9. Երկաթուղային գծի յուրաքանչյուր կողմում երկաթուղու պաշտպանական գոտու արտաքին սահմանագծի հեռավորությունը երկաթուղային գծի առանցքից սահմանվում է 50 մետրից ոչ պակաս:

10. Երկաթուղու պաշտպանական գոտու չափերը, երկաթուղու պաշտպանական գոտում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու կարգը սահմանում է կառավարությունը:



*Հոդված 15.2* Երկաթուղու օտարման շերտերի օգտագործման կարգը

1. Երկաթուղային տրանսպորտի երթևեկության և շահագործման անվտանգության ապահովման նպատակով օտարման շերտերի սահմաններում արգելվում է.

1) կապիտալ շենքերի-շինությունների, բազմամյա տնկարկների (արհեստական ծառերի) տեղակայումը.

2) անտառային զանգվածներին հարող վայրերում ցցաչոր ծառերի, թփերի, կամ գետնին ընկած չորացած ծառերի ոստերի, խշուրների, կամ հատված մնացորդների կամ այլ դյուրավառ նյութերի կուտակումը.

3) գյուղատնտեսական նշանակության հողերին հարող վայրերում մոլախոտային կամ փայտաթփային բուսականության կուտակումը:

2. Երկաթուղային տրանսպորտի երթևեկության և շահագործման անվտանգության պահանջների պահպանմամբ օտարման շերտերի սահմաններում հաղորդակցուղիների տեղադրումը լիազոր մարմնի համաձայնությամբ թույլատրում է ենթակառուցվածքի կառավարիչը (ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի սեփականատերը): Հաղորդակցուղիների տեղադրման համաձայնեցման կարգը սահմանում է լիազոր մարմինը:

3. Հաղորդակցուղիների համաձայնեցման կարգի պահանջների խախտման համար պատասխանատվությունը կրում է ենթակառուցվածքի կառավարիչը:

4. Օտարման շերտի սահմաններում տեղադրված հաղորդակցուղիների անսարքության պատճառով տեղի ունեցած տրանսպորտային պատահարների համար պատասխանատվությունը կրում է ենթակառուցվածքի կառավարիչը:

*Հոդված 15.3* Երկաթուղու պաշտպանական գոտիների օգտագործման կարգը

1. Երկաթուղային տրանսպորտի երթևեկության և շահագործման անվտանգության ապահովման նպատակով երկաթուղու պաշտպանական գոտիների սահմաններում արգելվում է.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերի խախտմամբ՝ կապիտալ շենքերի և շինությունների շինարարությունը, կամ ժամանակավոր ճանապարհների կառուցումը,

2) ծառա և թփուտային բուսականության հատումը, կամ ճիմե ծածկույթի հեռացումը,

3) հողային աշխատանքների կատարումը, որոնց հետևանքով պաշտպանական գոտիների հողերում կարող են առաջանալ հիդրոլոգիական ռեժիմի անբարենպաստ փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունության խախտում (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում).

2. Երկաթուղու պաշտպանական գոտիների սահմանները և կիրառվող սահմանափակումները ցույց տվող նշանները տեղակայում է ենթակառուցվածքի

կառավարիչը (ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային գծերի սեփականատերը):»

*Հոդված 9.* Օրենքը լրացնել հավելվածով՝ հետեւյալ բովանդակությամբ.

*Հոդված 10.* Անցումային դրույթներ

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 15.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերով եւ 15.3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները տարածվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

3. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կառուցված երկաթուղային գծերի օտարման շերտի եւ պաշտպանական գոտու չափերը սահմանվում են սույն օրենքի պահանջներին համապատասխան:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված երկաթուղային գծերի օտարման շերտի եւ պաշտպանական գոտու տարածքներում չեն ներառվում երկաթուղային գծի եզրային գծի առանցքից 3.8 մետր եւ ավելի հեռավորության վրա գտնվող մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը այլ անձանց սեփականության եւ այլ գույքային իրավունքներով պատկանող հողամասերը, ինչպես նաեւ օրինական հիմունքներով կառուցված շենք-շինություններով զբաղեցված եւ այդ շենք-շինությունների օգտագործման եւ սպասարկման համար անհրաժեշտ հողամասերը:

<< կառավարություն





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 137.5-րդ եւ 137.6-րդ հոդվածներով.

««*Հոդված 137.5* Երկաթուղու օտարման շերտի օգտագործման կարգի խախտումը

1.Երկաթուղու օտարման շերտի սահմաններում շենք-շինությունների կառուցումը,կամ բազմամյա տնկարկների (արհեստական ծառերի) տեղակայումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Անտառային զանգվածներին հարող վայրերում ցցաչոր ծառերի, թփերի, կամ գետնին ընկած չորացած ծառերի ոստերի, խշուրների, հատված մնացորդների կամ այլ դյուրավառ նյութերի կուտակումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:

3. Գյուղատնտեսական նշանակության հողերին հարող վայրերում մոլախոտային կամ փայտաթփային բուսականության կուտակումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի չափով:

4. Հաղորդակցուղիների տեղադրման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի կառավարչի կամ սեփականատիրոջ նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

*Հոդված 137.6* Երկաթուղու պաշտպանական գոտու օգտագործման կարգի խախտումը

1. Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված նորմների խախտմամբ շենք-շինությունների կամ ժամանակավոր ճանապարհների կառուցումը`

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում ծառա- թփուտային բուսականության հատումը կամ ճիմե ծածկույթի հեռացումը,

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի չափով

3. Երկաթուղու պաշտպանական գոտու սահմաններում հիդրոլոգիական ռեժիմի անբարենպաստ փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունության խախտում (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում) առաջացնող հողային աշխատանքների կատարումը.

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկի չափով:

4. Երկաթուղու պաշտպանական գոտիների սահմանները եւ կիրառվող սահմանափակումները ցույց տվող նշաններ չտեղադրելը`

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:»:

*Հոդված 2.* Օրենսգրքի 244.13-րդ հոդվածում «137.4» թիվը փոխարինել «137.6» թվով:

*Հոդված 3.* Սույն օրենքը ուժի մեջ մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կառավարություն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

# ՈՐՈՇՈՒՄԸ

---

## «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՆԻԿՈՅԱՆ

19 մարտի 2012 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1237 - Լ

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

*ՀՈԴՎԱԾ 1.* «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-11-Ն, 23 սեպտեմբեր 2003թ.) 7-րդ հոդվածում ավելացնել նոր՝ 7-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«7. Պետական կառավարման մարմինները եւ Երեւան, Գյումրի, Վանաձոր քաղաքների տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ունենան ինտերնետային կայք էջ, որտեղ տեղադրվում են սույն հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկությունները, ինչպես նաեւ բյուջետային եւ արտաբյուջետային միջոցների մուտքերի եւ կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկություններ՝ ըստ ուղղությունների: Բյուջետային եւ արտաբյուջետային միջոցների մուտքերի եւ կատարված ծախսերի հրապարակայնության վերաբերյալ վերը նշված դրույթը չի տարածվում ազգային անվտանգության եւ պաշտպանության ոլորտներում լիազոր մարմինների եւ ոստիկանության գործառույթներ իրականացնող պետական կառավարման մարմնի վրա:

Տեղեկատվությունը պետք է տեղադրվի կատարված բյուջետային եւ արտաբյուջետային միջոցների մուտքերի եւ ծախսերի գործարքների կատարումից ոչ ուշ քան 10 - օրյա ժամկետում»:

*ՀՈԴՎԱԾ 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա ժ պատգամավորներ
Վ.Հովհաննեսյան
Կ.Վարդանյան
Ա.Նռանյան
Ա.Շահբազյան
Ա.Մինասյան
Ա.Ռուստամյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## ՈՐՈՇՈՒՄԸ

---

### «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ — Տ. ԹՈՐՈՍՅԱՆ

17 մարտի 2008 թվականի,
քաղ. Երևան
Լ - 158 - 4

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի հոկտեմբերի 23-ի ՀՕ-248 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվում է հիմնադրի կողմից սահմանված բնագավառներում աշխատանքների կատարման և հանրությանը ծառայություններ մատուցելու համար»:

բ) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Պետական կազմակերպությունը հիմնադրի որոշմամբ կարող է հանդիսանալ այլ իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակից, եթե այդ իրավաբանական անձի գործունեությունը համապատասխանում է պետական կազմակերպության գործունեության նպատակներին:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «Հիմնադրման ժամանակ պետական կազմակերպությանը հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը սահմանվում է պետական կազմակերպության հիմնադրման մասին որոշմամբ» նախադասությունը,

բ) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«Պատմության, մշակույթի և բնության հուշարձանները, թանգարանային, գրադարանային, արխիվային հավաքածուները և այլ մշակութային արժեքները, բնական ռեսուրսները, ազգային պարկերը, արգելոցները և արգելավայրերը, ինչպես նաև շրջանառությունից հանված կամ սահմանափակ շրջանառության այլ օբյեկտները հիմնադրի կողմից չեն կարող որպես սեփականություն հանձնվել պետական կազմակերպությանը»:

գ) 2-րդ մասից հանել «հիմնադրի որոշումներին» բառերը:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Պետական կազմակերպությունը մատուցում է ծառայություններ (կատարում է աշխատանքներ), որոնք անմիջականորեն ուղղված են այն նպատակների իրագործմանը և խնդիրների լուծմանը, որոնց համար ստեղծվել է պետական կազմակերպությունը (հիմնական գործունեություն):

Պետական կազմակերպության հիմնական գործունեության հիմնադրի հաստուցմամբ և վճարովի ծառայությունների (աշխատանքների) ցանկը լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում է հիմնադիրը:

Պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, եթե այդ գործունեությունը համապատասխանում է պետական կազմակերպության ստեղծման նպատակներին և բավարարում է հետևյալ պայմաններից որևէ մեկը՝

ա) նպաստում է հիմնական գործունեության արդյունքների տարածմանն ու սպառմանը.

բ) նշանակությամբ համանման է հիմնական գործունեությանը.

գ) նպաստում է հիմնական գործունեության կատարելագործմանը.

դ) ապրանքների թողարկման, ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) համար օգտագործվում են հիմնական գործունեության մեջ կիրառվող տեխնոլոգիան ու սարքավորումները:

Ձեռնարկատիրական գործունեությունը պետական կազմակերպության հիմնական գործունեության համեմատ կրում է լրացուցիչ բնույթ:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

բ) 2-րդ մասից հանել «Պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը» նախադասությունը:

Հոդված 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ $6^{1}$-րդ, $6^{2}$-րդ և $6^{3}$-րդ հոդվածներով՝

«Հոդված $6^{1}$. Պետական կազմակերպության գործունեության ծրագիրը

1. Պետական կազմակերպության գործունեության ծրագիրը պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործմանն ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների, դրանց իրականացման ժամկետների, անհրաժեշտ ռեսուրսների և սպասվող արդյունքների համակարգված ամրագրումն է:

2. Պետական կազմակերպության գործունեության ծրագիրը կազմվում է յուրաքանչյուր տարի՝ հաջորդ երեք տարվա համար (տարեկան բաշխմամբ)՝ ծրագրի փոփոխման (ճշգրտման) հնարավորության հաշվառմամբ:

3. Պետական կազմակերպության գործունեության ծրագիրը պետք է բովանդակի՝

ա) տվյալ ժամանակահատվածում նպատակների իրագործմանն ու խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների ցանկը և ծավալը, այդ թվում՝ պետական կազմակերպության կողմից պետությանը մատուցվող այն ծառայությունների և կատարվող աշխատանքների ցանկը և ծավալը, որոնց հատուցումը նախատեսվում է ստանալ պետական բյուջեից.

բ) անհրաժեշտ նյութական, ֆինանսական և աշխատանքային ռեսուրսները.

գ) պետական կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային ցուցանիշները (երեք տարվա համար՝ տարեկան բաշխմամբ).

դ) եռամյա ծրագրի առաջին տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը.

ե) սպասվող որակական և քանակական արդյունքները.

զ) այլ դրույթներ:

Հոդված 6². Պետական կազմակերպության գործունեության ծրագրի կազմման և հաստատման (փոփոխման) կարգը

1. Պետական կազմակերպության գործունեության ծրագրի կազմման և հաստատման (փոփոխման) կարգը սահմանվում է սույն օրենքով և հիմնադրի որոշմամբ:

2. Պետական կազմակերպության գործունեության ծրագիրը կազմում է պետական կազմակերպության գործադիր մարմինը, հաստատում (փոփոխում) է պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը՝ լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի բացակայության դեպքում պետական կազմակերպության գործունեության ծրագիրը հաստատում (փոփոխում) է լիազորված պետական մարմինը:

Հոդված 6³. Պետական կազմակերպությունների գործունեության ծրագրերի կատարման մասին տեղեկատվության տրամադրումը

1. Լիազորված պետական մարմինները պետական կազմակերպությունների գործունեության ծրագրերի կատարման մասին եռամյակային հաշվետվությունները պետական ֆինանսների կառավարման լիազորված մարմնին են ներկայացնում



յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը:

2. Պետական ֆինանսների կառավարման լիազորված մարմինը պետական կազմակերպությունների գործունեության ծրագրերի կատարման հաշվետվություններն ամփոփում և մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական կազմակերպությունների գործունեության ծրագրերի կատարման տարեկան ամփոփ հաշվետվությունը մինչև հաջորդ տարվա հունիսի 1-ը տեղեկատվության ձևով ներկայացնում է Ազգային Ժողով և Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատ:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում, վերակազմակերպվում և դրանց գործունեությունը դադարեցվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ»:

Հոդված 6. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասում «գույքի կազմն ու արժեքը» բառերը փոխարինել «գույքի կազմն ու հաշվեկշռային արժեքը» բառերով:

Հոդված 7. Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի «գ)» կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 8. Օրենքի 13-րդ հոդվածի՝

ա) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «է¹» և «է²» կետերով՝

«է¹) պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգի սահմանումը.

«է²) պետական կազմակերպության հիմնական գործունեության հիմնադրի հատուցմամբ և վճարովի ծառայությունների (աշխատանքների) ցանկի հաստատումը:»:

բ) 3-րդ մասի «սույն հոդվածի 2-րդ կետի» բառերից հետո հանել «գ» տառը:

Հոդված 9. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «է¹)», «է²)», «է³)» և «է⁴)» կետերով՝

«է¹) հաստատում (փոփոխում) է պետական կազմակերպության գործունեության ծրագիրը, եթե պետական կազմակերպությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին, կամ պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի կողմից դրա հաստատման (փոփոխման) առնչությամբ տալիս է իր համաձայնությունը.

ե$^2$) հաստատում է պետական կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը.

ե$^3$) համաձայնություն է տալիս պետական կազմակերպության կառուցվածքի սահմանման վերաբերյալ:»,

ե$^4$) հաստատում է պետական կազմակերպության հիմնական գործունեության համար պատասխանատու այն պաշտոնների (ուսումնական մասի վարիչ, գեղարվեստական ղեկավար, գլխավոր խմբագիր, գլխավոր ինժեներ և նմանատիպ այլ) ցանկը, որոնցում աշխատանքի նշանակման և ազատման վերաբերյալ որոշումը պետական կազմակերպության գործադիր մարմինն ընդունում է լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:»:

Հոդված 10. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ$^1$)» և «զ$^2$)» կետերով՝

«զ$^1$) կազմում և հաստատման է ներկայացնում պետական կազմակերպության գործունեության ծրագիրը.

զ$^2$) հաստատում է պետական կազմակերպության հաստիքացուցակը.»:

Հոդված 11. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գանձապետարանում բացում է հաշիվներ.»:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածի՝

ա) 1-ին մասի՝

«ժբ)» կետը «խոշոր գործարքների» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 22$^1$-րդ և 22$^2$-րդ հոդվածների պահանջներին համապատասխանող գործարքների» բառերով.

բ) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժբ1) կետով՝

«ժբ$^1$) պետական կազմակերպության գործունեության ծրագրի հաստատումը (փոփոխումը).»:

Հոդված 13. Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Սույն հոդվածի պահանջների խախտմամբ կնքված գործարքը կարող է անվավեր ճանաչվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 315-րդ հոդվածի հիմքերով, պետական կազմակերպության հիմնադրի կամ լիազորված



պետական մարմնի պահանջով, եթե գործարքի մյուս կողմը գիտեր կամ պարտավոր էր իմանալ լիազորված պետական մարմնի համաձայնության բացակայության մասին:

Գործարքի մյուս կողմին գործարքը կնքելուց առաջ պետք է տրամադրվի լիազորված պետական մարմնի համաձայնության պատճենը կամ մեկ օրինակը:

Պետական կազմակերպության միանձնյա գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձը պետական կազմակերպության առջև պատասխանատվություն է կրում սույն հոդվածի պահանջների խախտմամբ խոշոր գործարքի կնքման արդյունքում պետական կազմակերպությանը պատճառված վնասի չափով:»:

Հոդված 14. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22$^1$-րդ և 22$^2$-րդ հոդվածներով՝

«Հոդված 22$^1$. Պետական կազմակերպության գործարքում շահագրգիռ անձինք

1. Սույն օրենքի իմաստով, պետական կազմակերպության գործարքում շահագրգիռ անձինք են համարվում պետական կազմակերպության միանձնյա գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձը, ինչպես նաև կոլեգիալ կառավարման մարմնի անդամը, եթե այդ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

ա) հանդիսանում են գործարքի կողմ, շահառու, միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) առանձին կամ միասին տիրապետում են բաժնետիրական ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի քսան և ավելի տոկոսին կամ սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների կանոնադրական կապիտալի քսան և ավելի տոկոսը գերազանցող բաժնեմասին, կամ գործարքի կողմ հանդիսացող այլ իրավաբանական անձի միակ կամ ոչ ավելի, քան երեք հիմնադիրներից (մասնակիցներից) մեկն են.

գ) գործարքի կողմ, շահառու, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում զբաղեցնում են պաշտոն:

2. Սույն օրենքի իմաստով, անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

3. Շահագրգիռ անձը պարտավոր է մինչև գործարքի կնքումը լիազորված պետական մարմնին տեղեկացնել պետական կազմակերպության գործարքում շահագրգռվածության առկայության մասին:

Հոդված 22². Շահագրգռվածության առկայության դեպքում պետական կազմակերպության գործարքի կնքման կարգը

1. Շահագրգռվածության առկայության դեպքում պետական կազմակերպության գործարքը կնքվում է լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

2. Սույն օրենքի $22^1$-րդ և $22^2$-րդ հոդվածների պահանջների խախտմամբ կնքված գործարքը կարող է անվավեր ճանաչվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 315-րդ հոդվածի հիմքերով, պետական կազմակերպության հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի պահանջով, եթե գործարքի մյուս կողմը գիտեր կամ պարտավոր էր իմանալ նշված պահանջները պետական կազմակերպության կողմից չպահպանելու մասին:

3. Պետական կազմակերպության գործարքում շահագրգիռ անձը պետական կազմակերպության առջև պատասխանատվություն է կրում պետական կազմակերպությանը պատճառված վնասի չափով:»:

Հոդված 15. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում «Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի» բառերը փոխարինել «Պետական կազմակերպությունը կարող է վերակազմավորման ձևով վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի» բառերով:

Հոդված 16. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«Ժամկետանց կրեդիտորական պարտքեր ունեցող հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերությունը չի կարող վերակազմակերպվել պետական կազմակերպության:

ՀՀ կառավարությունը կարող է սահմանել պետական կազմակերպություն հիմնադրելու կամ պետական հիմնարկը կամ հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերությունը պետական կազմակերպության վերակազմակերպելու մասին որոշման ընդունման լրացուցիչ պահանջներ»:

Հոդված 17. Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասում «մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե» բառերը փոխարինել «մնացած գույքի իրացումից ստացված դրամական միջոցներն ուղղվում են համապատասխան բյուջե» բառերով:

Հոդված 18. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի $6^3$-ի մասը ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից: Մինչև 2008, 2009 և 2010 թվականների հունիսի 1-ը Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ազգային ժողով և Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատ է ներկայացնում համապատասխանաբար՝ 2007, 2008 և 2009 թվականներին պետական կազմակերպությունների դրամական հոսքերի մասին ամփոփ տեղեկատվությունը:

ՀՀ կառավարություն

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի սեպտեմբերի 25-ի ՀՕ-232 օրենքի հոդված 23-ի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ՝

«Այն ընկերությունը, որի բաժնետոմսերի հարյուր տոկոսը պատկանում է պետությանը կամ համայնքին՝ կարող է վերակազմավորվել պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպության»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կառավարություն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

### «ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՆԻԿՈՅԱՆ

21 մարտի 2012 թվականի,
քաղ. Երևան
ԱԺՈ - 1242 - Լ

Առաջին ընթերցում

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

## «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաեւ երկակի նշանակության տեղեկատվության եւ մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին

*Հոդված 1.* «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, հայաստանի հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաեւ երկակի նշանակության տեղեկատվության եվ մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի ապրիլի 8-ի ՀՕ-42-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ի մասի՝

1) 1-ի կետում «ժամկետը» բառից հետո լրացնել «, պետական գրանցման կամ հաշվառման համարը» բառերը:

2) 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

*Հոդված 2.* Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կառավարություն